№ 50 ԿԻՐԱԿԻ ՄԱՐՏԻ 20 — 1905 — ԿԻՐԱԿԻ ՄԱՐՏԻ 20 № 50

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Ֆելիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Հանգուցեալ

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ

աշակերտները յայտնում են ազգականներին ու համակրողներին, որ կիրակի, մարտի 20-ին, առաւօտեան ժամը 12-ին, Վանքի մայր եկեղեցում կատարվելու է հոգեհանգիստ։ 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կանանց իրաւունքի հարցը—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընթերցողի օրագիրը. Գիւղական ցաւերից. Անմոռանալի գործչի յիշատակին. Բագուի աղէտի զոհերի օգտին. Թատրոն և երաժշտութիւն. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը Նամակ Պարսկաստանից. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Սիւնին ու շիան։

ԿԱՆԱՆՑ ԻՐԱՒՈՒՆՔԻ ՀԱՐՑը

Նորից ասպարէզ է եկել կանանց իրաւունքի հարցը և այս անգամ նա կըրում է փոքր ինչ ուրիշ բնաւորութիւն։ Նա միայն իբրև մի տեսական խնդիր չէ ներկայանում, այլ հերթական և գործնական։ Նա առաջ է մղվում, իբրև ծրագրական մի կէտ այն պահանջների մէջ, որ յայտնում է նոր Ռուսաստանը պետութեան առաջիկայ բարեկարգութեան համար։

«Կանայք պէտք է նոյնպէս ընտրողական իրաւունքներ ունենան, ինչպէս և տղամարդիկ»—դա համարվում է մի այնպիսի առաջարկութիւն, որ կարող է արդէն քննութեան առարկայ լինել և նոյն իսկ հասունութիւն գտնել։ Եւ արդարև, մի քանի համագումար ժողովներում կայացրել են որոշումներ կանանց ընտրողական իրաւունքներ տալու մասին։

Սակայն այն անձանց մէջ, որոնք համակրում են կանանց խնդրին և կանանց հասարակական գործունէութեանը, վէճ կայ մի կարևոր կէտի վերաբերութեամբ, այն է թէ արդեօք կանայք պէտք է միայն ընտրելու իրաւունք ունենան թէ կարող են և ընտրվել քաղաքական ասպարէզում գործելու համար։

Կանանց իրաւունքի պաշտպանողների մի մասը չէ վստահանում կանանց իրաւունք տալ պատասխանատու պաշտօններ վարել քաղաքական ասպարէզում։ Բայց եթէ լաւ հետաքրքրուած լինենք գործին, կը տեսնենք, որ կասկածները և երկիւղները անհիմն են, որովհետև գործնական կեանքի մէջ չեն ծագի շատ թիւրիմացութիւններ և ահա ինչ պատճառով։

Կանանց իրաւունք տալը դեռ չէ նշանակում թէ նրանք իսկոյն մեծ թւով անպատրաստ կերպով կը գրաւեն պատասխանատու ասպարէզներ։ Չեն գրաւի, որովհետև քուէ տուողը, ընտրողը ձայն է տալիս արժանիք ունեցող անձնաւորութեան և նա կը զգուշանայ ընտրելու այնպիսիներին, որոնք իսկապէս ընդունակ չեն գործ վարելու և պատասխանատու յանձնարարութիւն կատարելու։ Իսկ եթէ ժամանակով կանայք այնքան կառաջադիմեն, որ հանդէս կը բերեն բազմաթիւ լուրջ գործողներ, ինչ վնաս եթէ նրանք գրաւեն կարևոր ասպարէզներ։

Այժմ էլ կանանց հասարակական գործունէութեան համար կան մի քանի ազատ ասպարէզներ, բայց մենք չենք տեսնում, որ կանայք առանձին հեղինակութեամբ գրաւած լինէին լուրջ դիրքեր, իսկ այնտեղ, ուր նրանք արժանաւորապէս տեղ են բռնել, ոչ մի վնաս չէ առաջացել նրանց լուրջ գործունէութիւնից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

V

Պատանեկութեան օրեր... Նոյն իսկ դժբախտութեան մէջ ծնվածն էլ, նոյն իսկ ճակատագրի խորթ զաւակն էլ չէ կարող առանց քաղցր ժպիտների, առաց անուշ յոյզերի յիշել իր կեանքի այդ երազական, վարդագոյն շրջանը, այդ պայծառ արևոտ գարունը։

Եւ ամէն մի յիշատակ, որ կապված է նրա հետ, որ խօսում է նրա մասին, որքան թանգագին է, որքան սիրելի մեզ համար։ Մանաւանդ պատանեկութեան ընկերները, սրտակից, քաղցրախօս, բարի ընկերները։

Կար պատանեկութեան մի համաշխարհային, ընդհանուր ընկեր, ամէն տեղ միատեսակ սիրված. Ժիւլ Վէրն։ Նա մեռաւ այս քանի օրերը։ Եւ գրագէտ մարդ չի գտնվի ամբողջ աշխարհում, որի պատանեկական անձի յիշատակները չը զարթեցնէ այս մահը, յարուցանելով անկեղծ ափսոսանք։

Նա մեռաւ ծերութեան մէջ—77 տարեկան հասակում։ Նա հանճար չէր, նա գրական հսկայ չէր։ Բայց հանճարներն էլ հազիւ թէ նրա չափ կարդացված լինեն երկրագնտի բոլոր կողմերում, հազիւ թէ նրա չափ լայն ու մեծ ժողովրդականութիւն ունեցած լինեն ազգերի մէջ։ Նա ֆրանսիացի էր, բայց միաժամանակ ապրում էր ամէն մի տեղ, ուր դպրոց կայ, ուր գրագիտութիւն է աւանդվում։ Նա գրում էր ֆրանսերէն, բայց իւրաքանչիւր ազգի պատանեկութեան հետ խօսում էր նրա մայրենի լեզուով։ Համաշխարհային գրականութեան մէջ նա մի բոլորովին ինքնարոյն, նմանը չունեցող տիպ էր։

Վերին աստիճանի բեղմնաւոր մի գրիչ։ Կարող էք միանգամից յիշել նրա վէպերի գոնէ մի երրորդ մասը։ Զարմանալի հարուստ, ճոխ, դիւթիչ երևակայութեան տէր վիպագրող։ Յիշում էք «Գրանտ նաւապետի որդիները». ոչ մի աշխարհագրական ձեռնարկ, որքան էլ տաղանդաւոր գրված լինի նա, չէ կարող այնպիսի յափշտակութեամբ պատեցնել ձեզ աշխարհի շուրջը, ցոյց տալ բնութեան հրաշքները։ Այդ նոյն ֆանտազիան է, որ նաւապետ Նեմօի հետ մեզ տանում էր ծովի տակ, 20,000 փարսախ տարածութեան վրա մեզ էր ածում մեզ, ջրային աշխարհի բոլոր խորհրդաւոր անկիւնները ժողովում։ Այդ նոյն երևակայութեան առաջնորդութեամբ էր որ մենք ճանապարհորդում էինք լուսնի վրա, մտնում էինք երկրի խորքերը, տեղափոխվում էինք Աֆրիկայի հրատապ խորքերը, Հնդկաստանի նուիրական անտառները, հիւսիսային բևեռի յաւիտենական սառոյցների աշխարհը։

Եւ ապարդիւն, անօգուտ չէին մեր այդ թափառումները։ Ժիւլ Վէրնը գիտութիւն էր սովորեցնում մեզ իր այդ յափշտակիչ վէպերի մէջ։ Նա գեղեցիկ կերպով ուսումնասիրել էր բնական գիտութիւնները և մի ուրիշը նրա պէս չը կարողացաւ վէպը դարձնել գիտութիւնները ժողովրդականացնելու այդքան զօրաւոր միջոց։ Պատանեկական շահագրգռող, օգտակար ընթերցանութեան համար Ժիւլ Վէրնը միանգամայն անփոխարինելի էր։

Նա վաղուց էր թողել գրելը։ Բայց գիտութիւնը վերջին ժամանակներս ինչ մեծամեծ գիւտեր արաւ։ Եւ չերևաց մի այլ Ժիւլ Վէրն, որ պատանիներին գրաւիչ վէպերի մէջ պատմէր այդ նոր գիւտերը։ Նա միակն էր իր տեսակի մէջ։ Եւ ահա ինչու նրա մահը այնքան բարի, երախտագէտ յիշատակներ է զարթեցնում ամէն մարդու պատանեկական սիրուն անցեալի մէջ։

Բայց ես զուր վերևում ասացի, թէ Ժիւլ Վէրնը իւրաքանչիւր ազգի պատանիների հետ խօսում էր նրանց մայրենի լեզուով։ Այդպէս ասելով, ես մի բոպէ մոռացել էի մեզ, ռուսահայերիս։ Մեր թարգմանական խայտաբղէտ գրականութեան մէջ Ժիւլ Վէրն չը կայ, բայց մենք ունէինք մայրենի լեզուով դատարակվող պատանեկութիւն և այժմ էլ բոլորովին զուրկ չենք նրանից։ Մենք Գրանտ նաւապետի որդիների, Նեմօների հետ ծանօթացել ենք օտար լեզուների միջոցով, որովհետև մեր ժանկավարժները Ֆարրարի քարոզներն էին թարգմանում, իսկ ոչ-ժանկավարժները թարգմանում են ինչ որ պատահում է, ինչ որ կարճ է, հեշտ է։

Մենք, ուրեմն, այն ժողովուրդներից ենք, որոնք չեն ճանաչում Ժիւլ Վէրնին իրանց լեզուով։ Այդպիսի ժողովուրդների թիւը այնքան քիչ է, որ մենք դրանով պարծենալ չենք կարող կամ եթէ կամենում էք, կարող ենք պարծենալ նոյնքան, որքան իրաւունք ունի պարծենալու քուրդը, լեզգին, եթէ քիչ հեռու էլ գնանք՝ դահօմէացին։

Բարեբախտաբար, այս՝ իր տեսակի վայրենութեան հանգամանքը ամբողջ հայ ազգի վրա չէ ընկած, այլ միայն ռուսահայերիս վրա։ Մեսրոպեան տառերով հայկական լեզուով Ժիւլ Վէրն կայ։ Եւ այս փաստը մենք պարտական ենք Թիւրքահայերին։

Եւ գրական վայրենութեան ուրիշ մեղադրանքից էլ մեզ ազատում են Թիւրքահայերը։ Նրանք թարգմանական անհամեմատ մեծ եռանդ, բեղմնաւորութիւն են ցոյց տուել, քան մենք։ Բոլորովին պատաբեր չէ, որ մի ազգ հաղորդակից չէ դառնում համաշխարհային գրականութեան։ Հոչակաւոր գրողների թարգմանութիւններ չունենալը յետամնացութեան, խեղճութեան խոշոր ցաւագար ապացոյցներ են։ Թիւրքահայերը շատ նախատինքներից են ազատել հայութեան, իբրև մի քաղաքակրթվող ազգի անունը։ Տեսէք։

Ո՞վ է թարգմանել Վոլտէրը։—Թիւրքահայը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԻՒՆՆԻՆ ՈՒ ՇԻԱՆ

Գանձակում շիա Թիւրք հասարակութիւնը կատարելով իր սգի մեծ տօնը, առիթ տուեց հայ հասարակութեան յարգելու նրա կրօնական զգացումները, փակ պահելով ամբողջ Գանձակի խանութները ի պատիւ այդ տօնի, և ի նշան հայ-Թուրք համերաշխութեան։ Մենք կարևոր ենք համարում բացատրել այդ տօնի նշանակութիւնը Թիւրքերի կարծիքի համաձայն։

Իսլամները իրանք հաշուում են, որ երկրագնդիս երեսին մօտաւորապէս հարիւր եօթանասուն միլիոն մահմեդականներ կան, որոնք բաժանվում են երկու ճիւղի—սիւննի ու շիա։

Սիւննի բառը ծագած է սիւննէթ բառից, որ նշանակում է խօսք ու գործ, որով սիւննի ճիւղին պատկանողները առաջնորդվում են միայն դրանով, այդ սկզբունքը ճանաչելով, Մուհամմէդ մարգարէի խօսքն ու գործը և անուանվում են Սիւննի։

Շիա, արաբերէն բառ է, որ նշանակում է խումբ. Թէ ինչի՞ համար ծնվեց շիա—խումբը և ինչ տարբերութիւններով բաժան մնաց ու մնում է սիւննիներից, դրա մասին է, որ պիտի խօսենք։

Որքան որ ձեռքի տակ չունենք վիճակագրական ամենաստոյգ տեղեկութիւններ, այնու ամենայնիւ մեր նպատակին դէմ չենք գնում, եթէ մօտաւորագոյն հաշուով վերոգրեալ հարիւր եօթանասուն միլիոնը հետևեալ թուական բաժանմունքներին վերածենք, դրանով մենք կունենանք բոլոր սիւննիների ու շիաների թիւը։

Իրանի պետութեան մէջ սիւննի 1 միլիոն, շիա 6 միլիոն, (սիւննիները այստեղ բաղկանում են աֆղաններից ու եկւոր քրդերից). գումարը 7 միլիոն։

Կովկասում սիւննի 1½ միլիոն, շիա ½ միլ. գումարը 2 միլիոն։

Անդրկասպեան երկրում սիւննի 4 միլիոն, շիա չը կայ։

Թաթարստանում սիւննի 20 միլ. շիա չը կայ։

Հնդկաստանում սիւննի 58 միլ., շիա 2 միլ., գումարը 60 միլիոն։

Աֆղանիստանում սիւննի 5 միլ., շիա չը կայ։

Չինաստանում սիւննի 30 միլ., շիա չը կայ։

Օսմանեան կայսրութեան մէջ սիւննի 28 միլ., շիա 2 միլ. (այս երկու միլիոնները գտնվում են Արաբիայի, Մեքքէյի, Մեդինէյի և Քէրպէլէյի մէջ). գումարի 30 միլիոն։

Եգիպտոսում սիւննի 7 միլ., շիա չը կայ։

Մարոքքոում սիւննի 2 միլ., շիա չը կայ։

Թունիզում, Ճէզայիրում սիւննի 3 միլիոն, շիա չը կայ։

Ընդհանուր գումարը—սիւննի 159½ միլիոն, շիա 10½ միլիոն. բոլորը միասին 170 միլիոն։

Ինչպէս երևում է այս հաշուից, միայն Իրանի պետութիւնն է, որ ներկայացնում է շիա խմբի հոծ քանակութիւնը և որի մէջ կրօնն ու իշխանութիւնը բաժանված է։ Նէջֆում նստող մուշտէյիդը—Շեյխ-Հասան-Մամաղանին շիաների խալիֆն է, իսկ Թէհրանի Շահը՝ Իրանի արքայից արքան։

Սիւննիների մէջ կրօնն ու իշխանութիւնը միացած է Օսմանեան սուլթանի անձնաւորութեան մէջ, և այս է պատճառը, որ հասիպամական յայտնի սկզբունքների մէջ հաժաձայնութիւն չէ կարող տեղի ունենալ սիւննիների ու շիաների մէջ, որովհետև վերջիններիս կրօնի ու իշխանութեան բաժանումը աւելի շատ է։

Սիւննիներին ու շիաներին իրարից բաժանող անդունդը խալիֆութեան խնդիրն է։ Շիաները Մուհամմէդ մարգարէի յաջորդը համարում են Ալիին, և յետոյ յաջորդաբար իմամ Հասանը, իմամ Հիւսէյնը ու սրա որդին իմամ Զէյն-Իւլ-Ապդինը ու շարունակաբար։

Սիւննիները մարգարէի յաջորդը համարում են Աբուբէքիրը, Օմէրը, Օսմանը և այլն։

Ո՞վ էր Ալին...

—Սա Մուհամմէդի փեսան էր, քանի որ մարդ տարեկան երիտասարդ, մի քաջ ու պատերազմիկ տղամարդ, որը իր համարձակ բնաւորութեան հետ ունեցել է և բանաստեղծական ձիրք ու իսլամիէթի մէջ քերականութեան հեղինակն է համարվում։

Մէդինէի մօտ Իհուդի պատերազմումը, ուր Մուհամմէդը վիրաւորված է եղել երեսից և իր կոչումով Ալին օգնութեան է եկած Մէտինէից, յաղթութիւնը տարել է, որով Փէյղամբէրը նրան տուել է Ասատուլլահ պատուանունը, որ նշանակում է Աստուծոյ առիւծ։ Ալին ժառանգել է նաև մի ուրիշ պատուանուն իր եռուն գործունէութեան համար, և դա եղել է Հայդար-Սաֆտար, որ նոյնպէս նշանակում է օձ պատառող, թշնամու բանակը պատառող։

Եւ աւելի զարմանալի ու գովելի մի յատկութիւն, որ նա միացրել է իր քաջագործութիւններին, դա եղել է ժողովրդի ամենաազատ դասակարգին պատկանել՝ նրա ցաւերին կարեկից գտնվելը։ Յետագայ պատկերը, որ առնված է նրա կեանքից, ընորոշում է այդ կէտը։

Ալիի զրաղմունքը նախ իր արժանեանի փոքրիկ պարտէզի մշակութիւնն է եղած. դրանով նա ապրեցրել է իր բազմանդամ ընտանիքը, որ կազմված է եղել իր կին—Մուհամմէդի աղջիկ Ֆաթմայից, երկու որդիներ՝ Հասանից, Հիւսէյնից և չորս աղջիկներից։

Մոլիէրը։—Թիւրքահայը։ Սուլֆիտը։—Թիւրքահայը։ Բոժարշէն։—Թիւրքահայը։ Բոկկաչիօն։—Թիւրքահայը։ Վիկտոր Հիւգօն։—Թիւրքահայը։ Վալտրը Սկոթը։—Թիւրքահայը։ Լամարտինը, Ժորժ Սանդը, Շատոբրիանը, Պոլ Բուրժէն։—Թիւրքահայը։

Ո՞վ է թարգմանել «Հազար ու մէկ գիշերները»։—Դարձեալ թիւրքահայը։

Վերցրէք աւելի հին, աւելի մեծ անուններ, կլասիկներին.—Հոմերոս, Վիրգիլիոս, Բսենոֆոն, Տակիտոս, Պլուտարքոս, վերջապէս Միլտոն։—Բոլորը թիւրքահայերի գործեր են։

Մենք պարծենում ենք, որ մեր գրականութեան մէջ կան այդ անունները։ Բայց որքան մենք, ռուսահայերս, մասնակից ենք այդ փառքին։

Գոնէ թարգմանական գործունէութեան մէջ եռանդ, ընտրութիւն, սիստեմ ցոյց տայինք։

Այդ էլ վեր է մեր կարողութիւնից։ Էլ ի՞նչ ունենք ուրիշներին ցոյց տալու...

Լ.

ԳԻՒՂԱԿԱՆ ՑԱՒԵՐԻՑ

Ղազախի գաւառի ազգաբնակութեան մեծամասնութիւնը կազմում են հայերը և թուրքերը, որոնց գլխաւոր պարապմունքը կազմում է երկրագործութիւնը և անասնապահութիւնը։ Թուրք գիւղացիները վարում են ադալարների հողերը տուրքով (բահրով), տասն մասից մէկը հողատէրոջն են տալիս. իսկ հայերն իրանց համար ընտրել են բնակավայրեր լեռների ստորոտներն ու անտառները,—դեռ հին ժամանակներում, երբ իւրաքանչիւր օր յարձակման էին ենթարկվում—ապահով լինելու համար։ Ժամանակի ընթացքում հայերը անտառի մէջ հողեր բացին, որոնց մի մասը վարեցին, իսկ միւս մասում գոմեր շինեցին (մաղրա) որոնց կից կան ընդարձակ տարածութեամբ արօտատեղիներ և այնտեղ էլ գիւղացիները պարապում էին անասնապահութեամբ։

Երկար ժամանակ գիւղացիները օգտվում էին թէ թալաներից (поляно) և թէ արօտատեղերից. բայց սրանից 10—12 տարի առաջ արգելեցին գիւղացիներին օգտվելու թալաներից, արօտատեղերից, որով ոչ միայն արգելեցին գիւղացիներին անասնապահութեամբ պարապելու, այլ և մեծ հարուած հասցրին երկրագործութեանը։ Գիւղացիների դժբախտութիւններից մէկն էլ կայանում է նրանում, որ մինչև այժմ իրանց պատկանելիք «նադէլի» և արքունական հողերի սահմանները չեն որոշված, և այդ հանգամանքից օգտվում են անտառապահները և կեղեքում նրանց. պատահել են դէպքեր, որ գիւղացին իր սեփական այգուց ծառ կտրելու համար տուգանքի է ենթարկվել, դիմել է ուր հարկն է, բողոքել է, բայց ոչ միայն բաւարարութիւն, այլ նոյն իսկ պատասխան չէ ստացել. այսպիսի դէպքերը գիւղացուն յուսահատեցնում են։

Ի՞նչ անէ գիւղացին. մեծ կարիք ունի, բայց լեզու չունի, որ իր ցաւերը յայտնէ, իշխանաւորը գիւղացու լեզուն չէ հասկանում, գիւղացին իշխանաւորինը, թէ բողոք և թէ դատաստան լինում է թարգմանի միջոցով, բայց թէ նրանք որքան սրբութեամբ են կատարում իրանց պարտականութիւնները, իրանց է յայտնի։

Բագուի եղբայրասպան դէպքը ամեն տեղ ցնցում առաջացրեց, ճառեր արտասանեցին, ժողովներ կազմեցին, քարոզում էին եղբայրութիւն համերաշխութիւն... բայց ով ցանկանում է, որ եղբայրութիւնը, համերաշխութիւնը հիմնովին լինի, որ ապագայում մութ ոյժերը չը կարողանան խաբել, պիտի ուշադրութիւն դարձնէ գաւառների վրա, ուսումնարանի թիւը բազմացնէ։ Ուսումնարանները կարող են ռուսին, թուրքին, վրացուն, հային, քուրդին եղբայրական սիրով միացնել, ուսումնարանը պիտի հասկացնէ մարդկանց, որ դաւառական կարիքների և լեզուների տարբերութիւնը չը պիտի լինի երկպառակութեան և մարդասպանութեան պատճառներ...

Ուրախալի է այն լուրը, որ Թիֆլիսում մեր հարեան թուրքերն ևս ունենալու են հոգևոր դպրոց, որի ծառայութիւնը գաւառների համար շատ մեծ է. գիւղերի համար կը պատրաստվեն երիտասարդներ, մօլլաները կը լինեն կրթված, որոնք դեռ մեծ դեր են կատարում։ Եթէ ամենքս էլ աշխատենք, յոյս կայ, որ չարիքը վերջանայ։

Մելքիսեդէկ քահանայ

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ԳՈՐԾԻՉԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Մեր հասարակական գործիչներին, մեր խոկական բարերարներին մենք սովորաբար ճանաչում ու գնահատում ենք նրանց մահից յետոյ. միմիայն անողորմ մահն է մեզ ցնցում, մեր սրտի ու մտքի վրա ազդում, մեր աչքերը բաց անում ու ստիպում, որ բեռեռենք մեր տեսողութիւնը այն թանկագին գանձի վրա, որը նա, մահը, խլած մեր ձեռքից մի տեսակ դժոխային քրքիջով, մեր անզօրութիւնը ծաղրող դիւային ծիծաղով, տանում, տանում է հեռու մեզանից, տանում է յաւիտենականութեան գրկում ընդ միշտ թաղելու համար... Մենք նայում ենք անհետացող գանձի ետևից ու արցունք թափում, զուր, անօգուտ ու անզօրութիւնը ընդգծող արցունք... Մենք միշտ անտարբեր ենք գտնվում դէպի այդպիսի գանձը մեր ձեռքում եղած ժամանակ։ Նրան մենք չենք տալիս ամուր յենարան, անխորտակելի պատուանդան ու պատնէշներ, որոնց դերը պէտք է կատարեն մեր ինքնաճանաչութիւնը, հասարակական շահերն ու ցաւերն ըմբռնելու ընդունակութիւնը, մեր բարոյական պարտաճանաչութիւնը, կուլտուրական, քաղաքակիրթ ազգերի կեանքում բընական երևոյթների շարքն անցած այդ առաքինութիւնները, որոնցից մենք ընդհանուր առմամբ զուրկ ենք դեռ, որոնց թոյլ սաղմերն են միայն նկատվում մեզանում ու այն էլ ոչ մեր հասարակութեան բոլոր խաւերում...

Հասարակական գործիչը մեզանում շրջապատված է լինում ոչ միայն անտարբերութեան ցուրտ մթնոլորտով, նրան ըմբռնելու, հասկանալու, նրա սիրտն ալէկոծող ցաւերն ու յոյզերն զգալու անընդունակ ամբոխի ժխորով, այլ և յաճախակի անբարեացակամութեամբ, նախանձով, նախանձից ծագող ատելութեամբ, նեղ սրտերից բղխող ստոր կրքերի շնորհով լարած որոգայթների ցանցով... Այդ հայկական անմխիթար, յուսահատեցնող իրականութիւնը բնորոշող բազմաթիւ մռայլ, դըժգոյն բծերից ամենադժգոյնն է, որը մենք միշտ պէտք է մատնացոյց անենք, միշտ նկատենք, միշտ ընդգծենք ու մեր բոլոր ոյժերը լարենք, մեր մտաւոր ու բարոյական զարգացման միջոցով, մանաւանդ բարոյական զարգացման, անհետացնենք այդ անչափ մութ բիծը մեր իրականութեան, մեր ներքին աշխարհի դեռ ևս շատ մռայլ ֆօնի վրայից...

Քաղաքակիրթ ազգերի մէջ հասարակական գործիչը զառամեալ հասակում անգամ իրան թարմ, երիտասարդ է զգում յաճախակի, իսկ մեզանում ծերանում է երիտասարդ հասակում. Վիկտոր Հիւգօն ու Տենիսօնը 70—75 տարեկան հասակում խանդավառ սիրով տոգորված ոտանաւորներ էին գրում. Գլադստոնը 72 տար. հասակում (1880 թ.), երբ նա կազմակերպեց իր երկրորդ մինիստրութիւնը, դեռ թարմ, ուժերով ու աշխուժով լի, դեռ երիտասարդ քաղաքական գործիչ էր համարվում. իսկ մեզանում արտասովոր կամք, հաստատամտութիւն ու եռանդ է պահանջվում, նահատակութիւն կրելու ընդունակութիւն է պահանջվում, որ գործիչը մինչև իր կեանքի վերջը մնայ ասպարէզի վրա՝ հրապարակախօսը չը հեռանայ հրապարակից, բանաստեղծը չը ջախջախէ իր քնարը, գրողը անէծքով դէն չը շպրտէ իր գրիչը, հասարակական գործերի ղեկավարը չը թողնէ իր ձեռքի ղեկը. 50—60 տարեկան հասակում հասարակական գործիչը մեզանում արդէն ուժասպառ ծերունի է, ծեր է, ոչ միայն մարմնով, յաճախակի ֆիզիքական զրկանքներ կրած մարմնով, այլ և հոգով, բազմաչարչար հոգով, ընդհանուր մտաւոր, բարոյական կորովի թուլութեամբ, որը առաջ է գալիս ֆիզիքական ու բարոյական զրկանքներից, եռանդի ու ոյժերի արտասովոր լարումից ու յուսախաբութիւններից, անվերջ յուսախաբութիւններից։ Այդ տխուր երևոյթի պատասխանատուութիւնը ամենից առաջ ու ամենից շատ ընկնում է մեր հասարակութեան վրա...

Շատ հազուագիւտներն են մեր գործիչներից պահպանում իրանց ամբողջ կորովը, եռանդը, աշխոյժը, երիտասարդական թարմութիւնն ու երիտասարդական բուռն հաւատը դէպի հասարակական իդէալների յաղթանակը։ Այդ հազուագիւտների թւին ամենայն իրաւամբ պատկանում է հանգուցեալ Քրիստափոր Միքայէլեանը, «Մեր Քրիստափորը», մեր անզուգական, մեր անմոռանալի, մեր պաշտելի Քրիստափորը, որին ողբում է այժմս հայ ինտելիգենցիայի ամենաստուար մասը, որը իր բազմաթիւ ընկերների ու աշակերտների համար տարիներ շարունակ եղել է մի լուսաճաճանչ փարոս, հեռու հորիզոններ ցոյց տուող փարոս... Վերջին մի քանի տարիներում ոչ մի մահ այնպիսի խորը, ցնցող տպաւորութիւն չէ գործել հայ ինտելիգենտ շրջանների վրա, ինչպէս մեր նահատակ Քրիստափորի Մահը. կորուստը շատ ծանր է, նոյն չափ անտանելի...

Նրա խնկելի յիշատակը յարգվեց Գանձակում ըստ արժանւոյն Ս. Լուսաւորիչ եկեղեցում. երկու սեռի երիտասարդութեան ու ստուար բազմութեան ներկայութեամբ ամսիս 13-ին կատարվեց հանդիսաւոր հոգեհանգիստ։ Հանգուցեալ Միքայէլեանը Գանձակում էլ շատ անգամ եղած է. նրան այստեղ հեռուից չեն ճանաչում միայն։ Հանդիսականներից շատերը արտասվում էին հոգեհանգստի ժամանակ։

Ստ. Տէր-Աւետիքեան

ԲԱԳՈՒԻ ԱՂԷՏԻ ԶՈՀԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք. 1) Պավել Դոլուխանեանից ի յիշատակ Եկմալեանի 25 ռուբլի, 2) բժշկապետ Ա. Տէր-Յարութիւնեանից (Իվանգօրոդ) 15 ր., 3) Նոր-Նախիջևանի ս. Հռիփսիմեանց օր. ծխական դպրոցի ուսուցչական խմբից 30 ր., 4) Հին Տուրկեստանից Ա. Առուստամեանի ձեռքով հանգանակած 35 ր., 5) Պենզայի հայերից Կ. Յարութիւնեանի ձեռքով հանգանակած 60 ր. 50 կ., 6) Պետերբուրգից Կ. Ամատունու ձեռքով հաւաքած 15 ր. 70 կ., 7) Աւ. Տէր-Օհանեանից (Նուխի) 5 ր., 8) Խարկովի հայ համայնքից Սրապիոն քահ. Սամուէլեանի ձեռքով հանգանակած 370 ր. 20 կ., 9) Տիգրան Մէյլէանեանից (Կարս) 20 ր., 10) Մ. Տէր-Խաչատրեանից (Կարս) 10 ր., 11) Ս. Մուրուզեանից (Կարս) 10 ր., 12) Խ. Բզնունից (Կարս) 3 ր., 13) Զ. Աղաճեանից (Կարս) 5 ր., 14) Գիւմիւշդէրէ գիւղից (Սուխումի շրջան) Ղարագեօզեանի միջոցով 13 ր. 85 կ., 15) Բաթումից Մանթաշեան և ընկ. 1) գործարանից հաւաքած Փ. Փափազեանի միջոցով 194 ր. 60 կ., 16) Մեսրոբեանից (Բաթում) 5 ր., 17) Վաղարշապատից Գ. Ղազարեանի ձեռքով հաւաքած առաջն. մասնաժ. յանձնելու համար 93 ր. 51 կ., 18) Արդուինի գաւառի Մուրզուլ ձորում բնակվող արդուինցիներից Կ. Քեսսեանի միջոցով 10 ր. 20 կ., 19) Յ. Պլլրգեանի ձեռամբ Սօչիի Լօо և Կուբանսկի գիւղերի պլանատօրներից հաւաքած՝ տղամարդկանցից 41 ր. 40 կ., կանանցից 19 ր. 53 կ., 20) Դաւիթ քահ. Տէր-Ազարեանից (Օրդուբաթ) մասնաժողովին յանձնելու համար 7 ր., 21) Կիրակոս Յ. Տէր Կիրակոսեանից (Ղզլչախչախ) 37 ր., 22) Ապուլ գիւղից (Ախալքալաքի գաւառ) հոգեհանգստի ժամանակ հաւաքած 10 ր., 23) Թաղլար գիւղից հոգեհանգստի ժամանակ Մ. Սանամեանի միջոցով 46 ր., 24) Տաշկենդից Յ. Բէկնազարեանի կառավարիչ Կ. Գասպարեանի միջոցով հաւաքած 500 ր., 25) Թախտաբազարի հասարակութիւնից Բ. Ոսկանեանի և Թ. Փիրուզեանի ձեռքով հաւաքած 148 ր. 60 կ., 26) ս. Նունէի գաւեղէնիայից 10 հայ աշակերտուհիներից 15 ր.։ Ընդհանուր գումարը նախկին ստացածների հետ միասին 20,409 ռուբլի 87 կոպէկ։

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(Նալբանդեանի և Ամիրջանի կօնցերտը Պետերբուրգում.—Ներկայացումներ Եկատերինօդարում և Սև քաղաքում)

I

Պետերբուրգում մարտի 11-ին կօնսերվատօրիայի «փոքրիկ» դահլիճում մասնակցութեամբ օպերային երգիչ պ. Բէգլար Ամիրջանի (բարիտոն) և Ռէնտովիչի (երկրորդ ջութակ) կայացաւ կօնսերվատօրիայի դասատու հայազն ջութակահար պ. Յովհաննէս Նալբանդեանցի համերգը։ Ինչպէս և պէտք էր սպասել, համերգատուի՝ Պետերբուրգի ընտիր հասարակութեան սիրելի դարձած ջութակահարի

Մի անգամ Ալին երեք օրվայ ծոմապահութիւնից յետոյ, երբ հասնում է երեկոյեան ընթրիքի ժամը, իր ընտանիքի հետ սեղան է նստում։ Ընթրիքը եղել է թուզ, հաց ու քացախ։ Այդ ժամանակ տեսնում է, որ իր առջևից անցնում են սոված, քաղցած թշուառներ, մոռանում է իրանը, ու ընթրիքի հաց, թուզն ու քացախը բաժանում է նրանց, ու ինքը իր ընտանիքով մնում է սոված։

Իսկ երբ նա անցել է պատերազմական ասպարէզը, անձնականապէս հարստանալու միտումն չունենալով, պատերազմական աւարները բաժանել է հինգ մասի, որպէս զի նրա չորս մասը հանրային ծախքի և ապա մի մասը պատերազմողներին յատկացնվի։

Սիւննիների Աբուբէքիրը նոյնպէս Մուհամմէդի հետ Իհուդի պատերազմում գտնվելով, ինքն ևս կարօտ է եղել Ալիի օգնութեան։

Աբուբէքիրը եղել է ազնուական, հարուստ կալուածատէր, ունեցել է շատ ուղտեր ու զանազան հարստութիւններ։ Ըստ սիւննիների նրա խալիֆայութիւնը եղած է ընտրութեամբ ու Օմէրի առաջարկութեամբ. ժողովը ընտրել է նրան այն պատճառով որ ծերունի ութսուն տարեկան Աբուբէքիրը քիչ պատերազմասէր լինելով, չը պիտի կարողանար խալամութիւնը միշտ պատերազմի մղել Ալիի շատ պատերազմիկ բնաւորութեան ու երիտասարդական եռանդի հակառակ. քանի որ պատերազմը մարդկանց կոտորածներ ու մեծամեծ կորուստներ պատճառելով, կարող էր առիթ դառնալ խլամ հասարակութեան խլամութիւնից զզուելուն ու նրանից հեռանալուն։

Աբուբէքիրի յաջորդ Օմէրը իբր հասարակ մարդ, նախ երբ լսում է որ քոյրը Մէքքէում խլամութիւն է ընդունած, առնում է սուրը ու տանից դուրս գալով, գնում է նրան մորթելու, բայց երբ քրոջ տունը ներս մտնելուց առաջ լսում է Ղուրանի ընթերցումի ձայնը, ու բաւական ականջ դնելուց յետոյ նրա տպաւորութեանը ենթարկվելով, փոխանակ սպանութիւն գործելու, մտնում է և իր սուրը հաւատացեալների ոտքի տակը դնում։

Նորածագ կրօնի հաւատացեալները նրան նախ տեսնելիս վախենում են, բայց իրանց անվստահութիւնը փարատվում է, երբ հաւատացեալների թուի վրա մինչ էլ է աւելանում։

Իսլամութիւնը իր նոր ծագումի մէջ հալածական լինելով, կրած երկիւղներից Աղան կանչել են տուել հորերում, որ յատկապէս փորել են այդ բանի համար. և առաջինը Օմէրն է լինում որ հրամայում է բարձրանալ տանիքների վրա, և տանից վախելու Աղան կանչել. այդ օրից սկսվում է խլամութեան յաղթական տարածումն։

Կան կարծողներ, որոնք ասում են թէ այժմեան մինարէթների երկար ու կոլոր ձևը նախկին հորերի նմանութիւնից է առնված։

Օմէրին յաջորդում է Օսմանը, դարձեալ Մուհամմէդի փեսան. սա մարգարէի երկու աղջիկներն առնելու համար անուանվել է զիննուրէյն, (երկու լոյսի տէր) բայց չը նայած դրան սպանվում է խլամներից։

Օսմանին յաջորդում է Ալին, որ շիաներից ճանաչվում է խալիֆ։

Ուրեմն ժամանակի այդ կրօնական ու քաղաքական խառն գործունէութեան շրջանում, Ալին համարվում է ամբողջ խլամութեան մէջ պետ մի դիմադրական կուսակցութեան խմբակի (շիա), որ հիմնվելով իր սկզբունքների և ոյժերի վրա ասպարէզ է մտել։

Օսմանի մահից յետոյ, շիան որչափ որ ուզում է Ալին ճանաչել խալիֆ, իսկ Սուֆիայի որդի Մուավիէն Դամասկոսում նահանգապետ լինելով, պահանջում է իրան յատկացնել խալիֆութիւնը, որով երկու պահանջող կողմերի մէջ առաջ են գալիս ընդհարումներ։

Մուավիէի հրամանատարներից Օմրիասը, երկու պատերազմող կողմերի տաք կուի ժամանակ նիզակների ծայրերի վրա ղուրաններ մնկելով, Ալիի բանակին առաջարկում է զինադադար, ցոյց տալով թէ մեր ու ձեր միջում կայ ղուրանը. հետևապէս չէ կարելի կռուել ղուրանի ու նրա վարդապետութեան հետևողների դէմ։ Ալիի կողմակիցները հաւատում են այդ պատերազմական խորամտութեան, ու սուրերնին պատեանն են դնում. իսկ Ալին երբ տեսնում է իր բանակի լռելը, հրամայում է. զարկէք. իսկական ղուրանը ես եմ. իսկ այդ նիզակների ծայրերինը թանաք ու մագաղաթի կտորներ են, այնուամենայնիւ լռում է Ալիի բանակը, ու Ալին ստիպված հաշտութիւն է կայացնում։

Երկու կողմերից փոխանորդներ են կարգվում հարցին վերջ տալու։ Մուավիէի փոխանորդը լինում է Օմրիասը, Ալիին Էբու-Մուսա-Էլէշէրի, որպէս զի երկուսի խորհրդով Ալիին ու Մուավիէին խալիֆութիւնից հանեն ու մի երրորդը ընտրեն, բայց ըստ շիաների Օմրիասը խաբելով հասարակութեան՝ Ալիի պաշտօնանկութիւնն է հրատարակում, ու Մուավիէին ընդունում խալիֆ։ Այդ բանը վէճ ու կռիւ է առաջ բերում խլամիէթի մէջ, ու մի ժամանակից յետոյ Մուավիէի կարգադրութեամբ սպանվում է Ալին։ Հիմա մենք թողնելով յաջորդական պատմութեան թելը կը յայտնենք ահա, թէ ինչի՞ վրա է հաստատված շիաների սգի մեծ տօնը, որ կոչվում է «Շախսէյ Վախսէյ»։

Շիաները այս տօնով ներկայացնում են այդ ժամանակի պատերազմական բանակը ու ողբալով այդ մահը, իրանց մարմնի այս ու այն մասը կոտրատում, կտրատում են, ցոյց տալու համար այն մեծ անձնուիրութիւնը, որ իրանք ամէն ժամ և ամէն րոպէ պատրաստ են զոհել Ալիի յիշատակին։

Շամբորդ

անունը ահագին բաղմութիւն էր գրաւել, այնպէս որ դահլիճն ու խօրը ծայրէ ի ծայր լիքն էին հասարակութեամբ։ Ծրագիրը մշակված էր մտածած, հետևողական, այդ իսկ պատճառով և համերգը առանձին շուք ու փայլ էր ստացել։

Նալբանդեան իր համերգը սկսեց անմահ Բախի 2 ջութակների համար գրուած d.-moll կոնցերտով, որ այժմեան հասկացողութեամբ համերգի համար միանգամայն չոր երկ է, իսկ մասնագէտի համար առատ նիւթերի ուսումնասիրութեան աղբիւր։ Համերգատուին միանգամայն աջողվեց այդ չոր երկը հիւթալի դարձնել. հարկաւ երկար, շատ երկար է տքնել այդ առեղծագործութեան վրա տաղանդաւոր ջութակահարը. երևում էր, որ նա մանրակրկիտ անտիպի էր ենթարկել այդ գործը և առանձնապէս ուսումնասիրել նոյն իսկ ամենափոքր դետալները, այլապէս չէր կարելի այնպիսի նրբութեամբ արտայայտել և աւելի քան բեկֆ ցոյց տալ երկի ոճն ու գեղեցկութիւնը առաջի vivace և երկրորդ allegro մասերի մէջ։ Այստեղ ոճին խիստ հլու արտայայտութեան տեսակէտից լաւ պարտեսոր էր Նալբանդեանցին իր աշակերտը Ռէնտովիչ (II violino) որով և արտայայտութեան մի ամբողջութիւն էր ստացվում։ Առանձնապէս մեծ տպաւորութիւն թողեց միջին մասը—«Largo, ma non tanto», ուր ջութակահարը կարծէք ձայնի յաւիտենականութեան մասին էր խօսում ու ասում «հարկաւոր է դգայուն սիրտ, նուրբ ճաշակի հոտառութիւն ժանգոտած ձայնը անցեալի խորութիւնից հանելու, նախկին փայլով վերարտադրելու համար»։ Զգայուն սրտի այդ մարմնացումն ինքն էր, որ տանջված դէմքով կանգնած էր հասարակութեան յոյզերից բղխող անաչառ գնահատութեան առաջ, անողոք պատասխանի սպասելիս, իսկ այդ պատասխանը հասարակութեան քար սրտի քնքշացումն էր, և նրանից ակամայ ցայտող աղաղակն ու անվերջ ծափահարութիւնները, որ քանի գնում այնքան և այնքան աւելի էին սաստկանում ու դղրդացնում դահլիճը։ Չը գիտեմ, հայ երաժիշտներից որ և է մէկը երբ և իցէ արժանացել է օտար հասարակութեան կողմից այդպիսի մի մեծ ընդունելութեան, թէ սա առաջին օրինակն էր...

Վիէտանի A.-moll կոնցերտը միջոց տուեց համերգատուին բազմակողմանի կերպով արտափայլեցնել իր տաղանդը. այս այն կոնցերտն է, որի մասին աշխարհահռչակ ծերունի Ջութակահար Սարազատէն, չը բաւականանալով Նալբանդեանի արտասահման եղած ժամանակ նուագելու առիթով անձամբ յայտնած (այն մեծ բաւականութիւն պատճառելու համար) շնորհակալութեան, նամակով էլ է իր հիացմունքն ու սքանչացումը արտայայտել ամբողջապէս զգացումն դարձած երաժշտին և գուշակել նրա փայլուն ապագան։ Պագանինի էտիւդը, որ խրօմատիկ էլ և էջերի մի ամբողջ աշխարհ է ներկայացնում և իբրև տեխնիկական դժուարին գործ, երկար աշխատանք պահանջում, մեծ վարպետութեամբ կատարեց, որով և ապացուցեց, որ զգացումների բնական ղեղումների աղբիւր լինելով հանդերձ տիրապետում է և արտայայտութեան խրթին ու դժուարին տեխնիկային։

Այնուհետև նուագեց առաջին անգամ a) Տօր-Աուլինի «Արքան», b) Վիտալի «Չամանը», c) Սակալովի «Օրոր»-ը, d) Միկլաշեվսկու «Մաղուրկան»։ Բոլոր երկերն էլ գեղեցիկ են, գրված են վարպետի, հմուտ ձեռքի լայն գծերով, գեղարուեստական ֆորմերի տեսակէտից վերջինս միայն թոյլ է, բայց նրա այդ թերութիւնն էլ երկի մէջի եղած որոշ տրամադրութեան շնորհիւ աննկատելի է դառնում։ Անվերջ ծափահարութիւններից ու կեցցէներից ստիպված նուագեց նաև իբրև bis ա) «Oriental» իր, ասիական հոգով գրած, ինքնուրոյն երկը, բ) Martin Jacobi օր. 32 № 2 «Capriccio»-ն, գ) Դրիգայի Սերենադան, իր էտիւդը, նորից «Oriental»-ը և վերջն էլ ասիական թեմայի վրա գրած իր ֆանտազիան (առանց նուագակցութեան)։

Նալբանդեանի ինքնուրոյն հեղինակութիւնների մէջ աչքի էր ընկնում իր գեղեցկութեամբ «Oriertal»-ը, որի թեման վերցված է Ղրիմի թաթարների դայթարմայից. երկի մէջ տրամադրութիւն կայ։—Համերգատուն արժանացաւ դափնէպսակի և թանկագին ընծայի։

Ոչ պակաս աջողութիւններ ունէր և պ. Ամիրջան, որ վերջերս հասարակութեան առանձին սէրն ու համակրութիւնն է վայելում։ Ծրագրի մէջ նշանակված Բօրոդինի «Իշխան Իգոր» օպերայի արիան երգելուց յետոյ ստիպված եղաւ դիջանել հասարակութեան բուռն ծափահարութիւններին և երգել որպէս bis 1) Բախմանովի «О долго буду я» romանսը, 2) Ռէզկունովի «Իսպանական Սերենադան», 3) Լիլինի «Она хохотала» և Ռուբինշտէյնի «Передъ восходомъ» բալլադները, Դէնցի «Giulia»-ն Գաստալդոնի «Արգելված երգը» և Բիզէի «Կարմէն օպերայից» տօրէադորը։ Պէտք է ասել, որ Պ. Ամիրջանը օր ըստ օրէ առաջադիմում և պատուաւոր տեղ է բռնում Պետերբուրգի երգիչների մէջ։

Հասարակութեան մէջ աչքի էին ընկնում մասնագէտ երաժիշտները, պրոֆեսորները և այլն, որոնք ամեն մի բաժնից յետոյ խումբ խումբ դիմում էին դէպի արտիստական սենեակը և առանձնապէս շնորհակալութիւն յայտնում համերգատուին, իրանց պատճառած մեծ բաւականութեան համար։ Ցանկանք երիտասարդ տաղանդին աւելի ևս կատարելագործվելու՝ ափսոս միայն, որ մեր վարդը մեր միջավայրում չէ, օտարին է անուշահոտութիւն բուրում... Իսկ ո՞վ է մեղաւոր, մի՞թէ վարդը...

Զարդէ

II

Եկատերինօդար, մարտի 11-ին

Երկրորդ հասարակական ժողովարանի դահլիճում դերասան պ. Ն. Յովհաննիսեանը տեղական սիրողների մասնակցութեամբ խաղաց Շիլլերի «Աւազակներ» 5 գործողութեամբ յայտնի ողբերգութիւնը։

Ներկայացումը խաղի կողմից շատ աջող էր, մինչև անգամ նախընթաց՝ «Քինի» ներկայացումից էլ աջող։ Պ. Յովհաննիսեանը, որ կատարում էր Ֆրանց Մօրի դերը, ստիճանաբար մտնելով իր դերի մէջ՝ սկզբից մինչև վերջը մեծ ոգևորութեամբ տարաւ իր խաղը, այնպէս որ նա փայլեց իր դերի մէջ։ Նրա շնորհալի ձևերն ու շարժումները, միացած ոգևորութեան, ընդունակութեան, հարուստ, գեղեցիկ ու բնական դիմախաղի և նոյնքան գեղեցիկ արտասանութեան հետ, մեծ տպաւորութիւն թողեցին հասարակութեան վրա։

Մինչդեռ ներկայացումը խաղի կողմից այսպէս աջող էր, սակայն մուտքի կողմից այնքան էլ աջող չէր։

Խ. Բաբայեանց

III

Սև քաղաքի նաւթարդիւնաբերողների խորհրդի դահլիճում, կիրակի, մարտի 13-ին, հայ դրամատիքական սիրողների խումբը ներկայացրեց «Զոհի փոխարէն զոհ» և «Բանասեղծ»։ Չը նայած որ ծամծված պիեսներ են, այնուամենայնիւ դահլիճը լիքն էր հասարակութեամբ. գովելի է թատերասէրների եռանդը, որոնք կամենում են Սև քաղաքի հասարակութեան մխիթարել հոգեպէս, իբրև բացառութիւն պ. Շախատունի, ընդհանրապէս խաղը թոյլ անցաւ և ուշ վերջացաւ ներկայացումը, մի բան որ շատ աննպաստ է հանդիսանում բանաւորների համար,—անքուն թողնելով նրանցից շատերին։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Քիշինեվ, մարտի 10-ին

Մեր մարդասիրական դարում նոյն իսկ անասունները գտնում են հովանաւորութիւն իրանց համար։ Մենք դարձեալ ականատես ենք մի սարսափելի ոճիրի, այն է անմեղ մարդկանց կոտորածի, որ տեղի ունեցաւ Բագուում։ Մենք յուզված նրանից մինչև մեր սըրտերի խորքերը, մենք Քիշինեվի ուսանող հայերս շտապում ենք մատնել մեր լուման նուիրատուների ընդհանուր գումարի հետ մեր ջնջված Բագուի հայ եղբայրների օգտին։ Փողերը (50 ռուբլի) ուղարկում ենք «Бессарабская Жизнь» լրագրի խմբագրութեանը, որ նա, միացնելով միւս նուիրատուների գումարների հետ, հասցնէ ձեր յարգելի խմբագրութեանը։

Քիշինեվի քաղաքի ուսանող հայ երիտասարդներ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է 1½ թերթից։

Երևանի քաղաքագլուխն իբր պատասխան իր խփած հեռագրի, ստացել է հետևեալ հեռագիրը Կովկասի նոր փոխարքայից. «Անկեղծաբար շնորհակալ եմ Երևանի դումայից արտայայտած զգացմունքների համար։ Հաստատ յոյս ունեմ, որ հասարակական վարչութիւնը պատրաստ է դիմաւորելու Երևանում մարքերը խաղաղացնելու գործին և դրանով օգնելու ինձ կարգը վերահաստատելու ինձ համար թանգագին Կովկասում։ Կոմս Վորոնցով Դաշկով»։

—

Այսօր կիրակի, մարտի 20-ին, տեղի կունենայ Թիֆլիսի պարբերական հրատարակութիւնների խմբագիրների ժողով խորհրդակցելու այն էական կարծիքների մասին, որ պէտք է ներկայացնել Բարձրագոյն հաստատված այն յանձնաժողովին, որ քննում է մամուլին վերաբերեալ օրէնսդրութիւնը։

—

Թիֆլիսի մամուլի գործիչները դիմել էին հեռագրով Կօբեկօի յանձնաժողովին և խնդրել, որ թոյլ տրվի իրանց էլ ներկայացուցիչներ ուղարկելու մասնակցելու այդ յանձնաժողովի նիստերին, երբ քննութեան առնվելու լինի օտար լեզուով մամուլի ցէնզուրական պայմանները։ Երէկ, մարտի 19 ին, Կօբէկօի յանձնաժողովի գործավար Վերեշչագինից ստացվեց հետևեալ պատասխանն այդ առիթով. «Եթէ ընդհանրապէս պատուիրակներ հրաւիրելու լինեն, ձեզ իմաց կը տրվի իր ժամանակին»։

—

Ստացանք հետևեալ հեռագիրը. «Երեւան, 19 մարտի։ Հոգեկան բերկրանքով արձանագրում եմ հայերի հոգեկից եղբայրացման փաստը։ Այսօր բոլոր հայերը, իբր նշան սուգի, փակել էին իրանց խանութները և մղկիթում ներկայ էին այն հոգեհանգստին, որ կատարում էին մահմեդականները Քարբալայի հանգուցեալ մուշտայիդի համար։ Հայերը ներկայ էին, գլուխ ունենալով թեմական առաջնորդին։ Լ. Մուշեղեան»

—

Թիֆլիսի Դումայի մարտի 17-ի նիստում կարդացվեց Թուրք ազգաբնակութեան խնդիրը, որով յայտնում էին Թիֆլիսի Թուրքերը, որ իրանց կողմից ընտրել են Իբրահիմ Բէկ Վէքիլովին Պետերբուրգ գնալու և հայ, ռուս ու վրացի ձայնաւոր պատգամաւորների հետ ներկայանալու պատշաճաւոր պաշտօնատեղերում՝ դումայի արդէն վճռած նպատակների համար։ Ինչպէս յայտնի է, դուման ընտրել էր Բահիմ բէկ Ախունդովին, որը նախ համաձայնվել էր, բայց յետոյ հրաժարվել։ Դուման, լսելով Թիֆլիսի Թուրք ազգաբնակութեան այդ օրինական խնդիրը, առանց երկար կանգ առնելու, ընդունեց ընտրված նոր պատգամաւորին, որ գնալու է շտապով միանալու արդէն Պետերբուրգ հասած միւս 3 պատգամաւորներին։

—

Թիֆլիսի երդուեալ-հաւատարմատարները և նրանց օգնականները մարտի 20-ին ունենալու են ընդհանուր ժողով պատգամաւորներ ընտրելու և ուղարկելու Պետերբուրգ, մասնակցելու իրաւաբանների այնտեղ կայանալիք համաժողովին։ Իսկ այդ համաժողովն զբաղվելու է այն բոլոր հարցերի քննութիւնով, որոնք բղխում են փետրվարի 18-ի ըէսկրիպտից։

—

Բագուի իրաւաբաններն ընտրել են հետեւեալ երդուեալ-հաւատարմատարներին մասնակցելու Պետերբուրգում կայանալիք իրաւաբանների համաժողովին Ս. Ս. Յարութիւնեան, Ա. Մ. Թօփչիբաշով, Ս. Ա. Վօնսովիչ, Եա. Ն. Վօնսովիչ, Եա. Ն. Սմիրնով, Ն. Բ. Գլազբէրգ և իշխան Լ. Ն. Անդրոնիկով։

—

Բութայիսի դպրոցական վարչութիւնը որոշել էր, որ մինչև մարտի 7-ը դպրոց չը յաճախող սաները հատարվելու են դպրոցից արձակված։ Այդ բանը մեծ վրդովմունք էր առաջացրել հասարակութեան մէջ։ Նահանգապետը, ասում է «Իվերիան», վերացրեց այդ որոշումը և նպաստեց մարքերի խաղաղվելու գործին։

—

Բագուի բոլոր գիմնազիաներում դասատուութիւնը դադարել է գեներալ-նահանգապետի թոյլատրութիւնով։ Պէտք է քննվեն և պարզվեն կանոնաւոր զբաղմունքների պայմանները։

—

Բաթումի արական գիմնազիայի աշակերտները մարտի 16-ին, առաջին դասից յետոյ, վճռում են, որ ներկայ կարգերի ժամանակ պարապելն անհնար է, պէտք է դադարեցնել դասերը։ Բայց, ասում է «Կ. В.» լրագիրը, վարչութիւնը դպրոցի դռները փակել տուեց, որ ոչ ոք դուրս չը գնայ։ Այն ժամանակ չարաճճի աշակերտները կոտրատեցին մի քանի շիշ լիքը ծծմբաջրածնային գարշահոտ գազով, կոտրատեցին լուսամուտներն ու դռները։ Այդ դէպքում տեսուչն ստիպված եղաւ դռները բաց անել տալ և ազատ թողնել բոլորին։ Աշակերտներն այդ տեղից գնում են իգական դպրոցի առաջ և ստիպում դասերը դադրեցնել։

—

Թիֆլիսի քաղաքագլուխը մի հեռագիր է ստացել Դերբէնտի քաղաքագլխից, որով յայտնում է, թէ դումայի որոշումով իրանց քաղաքն էլ ցանկացել է մասնակցել Թիֆլիսի դումայի որոշմանը՝ ներկայացուցիչներ ուղարկելու Պետերբուրգ Բուլիգինի յանձնաժողովին մասնակցելու։ Քաղաքագլուխը այդ առիթով դիմել է նահանգապետին, բայց վերջինս այդ բանը գտել է Դերբէնտի համար դեռ վաղաժամ։

—

Երևանից հեռագրում են Н. О.-ին մարտի 18 ին. «Երևանի արական գիմնազիայի աշակերտների գրգռված դրութիւնն աչքի առաջ ունենալով, ծնողները մասնաւոր խորհրդակցութիւն ունեցան և վճռեցի միանալ աշակերտների պահանջներին և ամեն միջոց ձեռք առնել գործնականապէս իրականացնելու նրանց այն պահանջները, որոնք չունեն քաղաքական բնաւորութիւն և որոնք վերաբերվում են միայն կրթական-ուսումնական գործի բարենորոգմանը»։

—

«Н. Об.»-ին հեռագրում են Քութայիսից մարտի 16-ին. «Այնտեղ, ուր երէկ չէ անցեալ օրը կողոպտեցին կայարանի գլխաւորին, այսօր առաւօտեան 11 ժամին չորս զինված չարագործներ կողոպտեցին նոյն գլխաւորի օգնականին, որ գանձարան էր տանում 7,000 ռուբլի։ Կողոպտողներին բռնել են, դրամը հետները»։

—

Թիֆլիսում դեղատան պահեստատէր Ալ. Ռոստոմեանի տան վրա (Պուշկինսկի փող.) մարտի լոյս 18-ի գիշերը յարձակվել են 2 դիմակաւորված գողեր, կապոտել տանտիրոջը և աղախնին, սպառնացել նրանց սպանել, եթէ ձայն-ծպտուն հանեն և կողոպտել տանից մօտ 600 ռուբլու դրամ և արժէքաւոր իրեր։

—

Շորեքշաբթի, մարտի 23-ին երեկոյեան ժամը 8-ին Թիֆլիսի դումայի դահլիճում կայանալու է Թիֆլիսի գործակատարների փոխադարձ ընկերութեան արտակարգ ընդհանուր ժողով նրանց կարիքների մասին խորհրդակցելու համար։

—

Բագուի պարսկական հիւպատոսը դիմել է նպաստամատոյց յանձնաժողովին և խնդրել, որ նիւթական օժանդակութիւն տրվի փետրվարի 6—9 կարմիր օրերում սպանված պարսկահպատակներին, որոնց թիւն է 74 հոգի—5-ը հայ, 69 ը մահմեդական։ Վիրաւորված պարսկահպատակների թիւը 48 հոգի է եղել, որոնցից 4-ը միայն հայ։ Իսկ կողոպտված են 40 պարսկահպատակներ՝ 8-ը հայ և 2-ը միայն մահմեդական։ (Б. Изв.)

—

Բագուի փոխ-նահանգապետը մի նամակ է ուղղել այնտեղի քաղաքագլխին, որ նիւթական օժանդակութիւն տրվի խառնակութեան օրերին Բագուում սպանված գօրոգօվոյ Շատրինի ընտանիքին։ Մարտի 15-ին նպաստող կօմիտէի քննութիւնից երևացել է, որ Շատրինն սպանվել է հետևեալ պատճառով. նա խլել է մէկի ձեռքից ատրճանակը և ծախել մի ուրիշ անձի Տելեֆոնի փողոցում, այդ պատճառով էլ նրան սպանել են։ Չը նայելով պաշտօնեային անվայել այդ վարմունքին, այնուամենայնիւ կօմիտէը որոշել է, ինչպէս ասում է «Б. Изв.», քննել սպանվածի ընտանիքի վիճակը և նիւթական օժանդակութիւն անել, եթէ արժանի լինի։

—

Մարտի 15-ին Բագուում Հ. Զ. Ս. Թաղիեվի տանը կայացել է մահմեդականների ներկայացուցիչների խորհրդակցութիւն քննութեան ենթարկելու այն հարցը, թէ պէտք է արդեօք առանձին խնդիր ներկայացնել մինիստրների խորհրդին Կովկասի մուսուլմանների կարիքների մասին և հաշուել այն ըէֆորմները, որ անհրաժեշտ են Կովկասի դրութիւնը բարելաւելու համար։ Ժողովը վճռեց, որ այդպիսի խնդիրն անհրաժեշտ է։ Անհրաժեշտ դատվեց խնդրել նաև, որ մահմեդականների ներկայացուցիչներին թոյլատրվի մասնակցելու Բուլիգինի յանձնաժողովի մէջ։ Այդ խնդիրը մշակելու և Պետերբուրգում ներկայացնելու համար որոշվել է դիմել Լէնքորան, Ղուբա, Շամախի, Դէօրչայ, Սալիան, Գանձակ, Շուշի, Նուխի, Ղազախ, Թիֆլիս, Երևան, Նախիջևան,

Դերբէնտ, Թէմիր-Խան-Շուրա և Վլադիկավկազ, որ այնտեղի մահմեդականներն ուղարկեն իրանց պատուիրակները Բագու, ընդհանուր խորհրդակցութեան։ Բագուի մահմեդականներն իրանց կողմից ընտրել են խորհուրդին մասնակցելու հետևեալ անձերին. Ֆաբուխ-բէկ Վէզիրով, Թոփչիբաշով, Աղաեվ, Շամսի Ասադուլլաեվ, Ալիեվ և Նաջաֆ Ղուլի Սաղրխով։ (Каспій)

—

«Русь» լրագիրը հաղորդում է մի քանի կենսագրական տեղեկութիւններ Բագուի նահանգի վրա նշանակված սէնատոր-քննիչ Ա. Մ. Կուզմինսկու մասին։ Նա ստացել է իրաւաբանական կրթութիւն, որ աւարտել է 1860 թուին և անմիջապէս մտել է դատաստանական քննիչի պաշտօնի մէջ Տուլայում, իսկ յետոյ էլ անցել է պրօկուրօրի օգնականի պաշտօնին։ Հմտարեա նրա ամբողջ կեանքն անց է կացել արդարադատութեան մինիստրութեան մէջ վարած պաշտօններում։ Այդտեղ վարելով խոշոր ու պատասխանատու պաշտօններ, հինգ տարի սրանից առաջ նա նշանակվեց սէնատոր։ Այժմ նա Պետերբուրգում զբաղված է իր հմտար աշխատակիցների խումբ կազմելով, որպէս զի դայ և կատարէ իր վրա դրված պատասխանատու գործը Բագուում։

—

ՍՈԽՈՒՄԻՑ մեզ հաղորդում են, որ ստացված է հրաման Թողնելու Թիւրքահպատակ ծխախոտագործներին իրանց տեղերում մինչև նոր կարգադրութիւն։ Այդպիսով, ուրեմն առայժմ մեր ծխախոտագործները կարող են հանգիստ զբաղվել իրանց գործով և սպասել տարվայ բերքին, որով նրանք ապահովում են իրանց ապրուստը։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Մայիս 13-ին, Գետաշէնում խուռն բազմութեան ներկայութեամբ հոգեհանգիստ կատարվեց մեր վաղամեռիկ Քրիստափոր Միքայէլեանի յիշատակին։ Քահանաներից մէկը մի սրտառուչ դամբանական խօսեց հանգուցեալի մասին։ Ժողովուրդը ցրվեց այդ մեծ կորուստի ծանր տպաւորութեան տակ։»

—

ՑԱՐԻՑԻՆԻՑ մեզ գրում են. «Անցեալ կիրակի այստեղ կատարվեց հոգեհանգիստ Բագուի նահատակների համար։ Աղօթատունը լի էր երկու սեռի բազմութեամբ, (որը մեզանում հազուագիւտ է) պ. Վահան Աֆրիկեանը խօսեց աղէտի մասին։ Բացի դրանից հանգանակութիւն եղաւ Բագուի զոհերի օգտին։»

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են. «Մայիս 13-ին, կիրակի օրը, նշանակված էր Քրիստափոր Միքայէլեանի հոգեհանգիստը ս. Վարդանանց եկեղեցում։ Հաւաքվել էր մօտ 1000-ի չափ ժողովուրդ։ Հայր Մինաս Աղնավուրեանցը մի հմտառոտ ճառով ծանօթացրեց ժողովրդին Քրիստափորի գործունէութեան և կեանքի հետ։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Զorfերի յոգնածութիւնը։ Գունչժուլինից «Русь» լրագրին հեռագրում են մարտի 11-ից. «Մեզ աջողվեց հինգ տեղերում պայթեցնել Կայիւանից դէպի հիւսիս գտնվող կամուրջը, որի ժամանակ վիրաւորվեցին հինգ զինուոր։ Մարտի 5-ին երեկոյեան այդ կամուրջից դէպի հարաւ եապօնացիները բաւական զօրեղ փորձ արին յարձակում գործելու երկաթուղու գծի մօտ։ Այդ յարձակումը ստիպեց մեր վերջապահ զօրքին կանգ առնել և կռիւը շարունակվում էր մինչև կէս գիշերից անց, այնպէս որ մենք յետ մղեցինք երկու բաւական զօրեղ յարձակումներ, որից յետոյ զօրքերը սկսեցին կամաց-կամաց հեռանալ դէպի հիւսիս։ Մարտի 6-ին, 7-ին և 8-ին մենք շարունակում էինք նահանջել թեթև հրացանաձգութեամբ։ Ահա արդէն շուտով ամիսը կը լրանայ, որ զօրքը հանգիստ չունի, և բնական յոգնածութիւնը զգալ է տալիս իրան։ Պէտք է զարմանալ, թէ որպիսի համբերութեամբ մեր զինուորները տանում էին պատերազմի ծանրութիւնները։ Երէկ բանակը կանգ առաւ Սիպինգայից դէպի հարաւ, բայց արդեօք այնտեղ կընդունէ՞ կռիւը, յայտնի չէ։ Ասում են, որ այսօր առաւօտ եապօնացիները սկսել են արշաւել մեր սիպինգայեան դիրքերի վրա, դիմելով գլխաւորապէս դէպի երկաթուղու գիծը և ճակատը։ Նորից յամառութեամբ լուր է պատում, որ իբր թէ եապօնական երկու բանակներ առաջ են շարժվում երկաթուղու աջ ու ձախ կողմը, նրանից մեծ հեռաւորութեամբ, գնալով դէպի հիւսիս, ակներև դիտաւորութիւն ունենալով կտրել մեզ Խարբինից։ Ռուս-չինական բանկի Մուկդէնի բաժանմունքը ազատեց բոլոր փողերը, բացի 300 հազարից (Тлф.)։

Ռուս գերիներ Եապօնիայում։ Տխուր լուրեր է հաղորդում «Matin» լրագրի Տոկիօի թղթակիցը մեր գերիների մասին Եապօնիայում։ Նրա խօսքով, նրանք այնպիսի դառնութեամբ են խօսում Ռուսաստանի մասին, որ կատարելապէս վարկաբեկ են անում իրանց հայրենիքը թշնամու աչքում։ Պատերազմից յետոյ կասեն, որ Ռուսաստանը յաղթվեց հէնց ռուսների ձեռքով։

Մինչև Պօրտ-Արտուրի անձնատուր լինելը Եապօնիայում ընդամենը 3789 գերիներ կային. անձնատուր լինելուց յետոյ գերիների թիւը միանգամից դարձաւ 27,107 հոգի, որ նախկինների հետ միասին կազմում են 30,896 հոգի։ Դրանցից 7 գեներալներ են, 49 օֆիցէրներ և 512 ունտէր-օֆիցէրներ։ Դրանք բոլորն էլ տեղաւորված են զանազան քաղաքներում։ Այդ բոլոր քաղաքներում բարրակներ են կառուցված գերիների համար, բայց Պօրտ-Արտուրից եկողների մեծ մասը, հիւանդ լինելու պատճառով, զետեղված են հիւանդանոցներում և տաճարներում։ Եապօնացիները ազատ մուտք ունեն գերիների մօտ. հարկաւոր է միայն կօմենդանտի թոյլտուութիւնը. բայց օտարազգիները պէտք է թոյլտուութիւն խնդրեն զինուորական մինիստրից, որ յաճախ մերժում է։ Գերիների կեանքը, թղթակցի խօսքով, արդէն այնպէս վատ չէ։ Վատ չեն կերակրում նրանց. իւրաքանչիւրը ստանում է օրական երեք ֆունտ սպիտակ հաց, մի քառորդ ֆունտ միս և սուպի համար բանջարեղէններ. կերակուրը տրվում է օրական երկու անգամ. թէյը—չորս անգամ. բացի դրանից իւրաքանչիւրին տրվում է շաբաթական 60 ծխախոտ և 40 «պիրօժօկ» թէյի համար։ Գերիները բաժանված են դաւանութեան համեմատ. պրավօսլաւներ, հրէաներ, կաթոլիկներ, բողոքականներ և մահմեդականներ։

Իւրաքանչիւր շաբաթ նրանց տանում են խմբերով քաղաքից դուրս եապօնական զինուորների հսկողութեամբ. չորս զինուոր հարիւր գերիների համար։ Բոլոր գերիներին տրված են ներքնակներ և վերմակներ, նոյնպէս և մոխրագոյն մահուդէ զգեստներ։ (Нов.)

Խաղաղութեան հարցը եւ անգլիական ու ամերիկեան մամուլը.—Հեռաւոր Արևելքում տեղի ունեցող դէպքերը անգլիական լեզուով հրատարակվող մամուլի օրգանները քննութեան առարկայ դարձնելով, խօսում են արդէն խաղաղութեան լուրջ հաւանականութիւնների մասին։ Պօրտ Արտուրի առումից և այնուհետև յաջորդաբար տեղի ունեցող ընդհարումներից պէտք է յանգել այն եզրակացութեան, որ պատերազմը մօտ է իր վախճանին։ Յամենայն դէպս հաշտութիւնը տեղի կունենայ ամառվայ մէջ։ Եւ դրան իբրև գլխաւոր փաստ առաջ բերում են այն հանգամանքը, որ Մանջուրիայի ձմերային խստութիւնները պէտք է ստիպեն երկու պատերազմիկ պետութիւնները, եթէ ոչ կնքել մի զինադուլ, գոնէ դադարեցնել առժամանակ պատերազմական գործողութիւնները։ Ահա ա՛յդ միջոցում եւրոպական պետութիւնները կը ջանան խաղաղութեան, հաշտութեան ձայնը լսելի անել Տոկիօում և Ս.-Պետերբուրգում։ Բայէն հասել է, արդարև, երբ Եապօնիան կարող է ընդունել խաղաղութեան պայմանների մասին բանակցութեան առաջարկը և Ռուսաստանը ամենքի կարծիքով, լաւ կանէր եթէ գործը անուշի կապելով դուրս գար այդ աղէտաբեր կռիւից։ Որովհետև, մանաւանդ ամերիկեան մամուլի կարծիքն այն է, որ այսուհետև չը պէտք է յոյս դնել յաղթանակի և հետևաբար աւելի բարեյաջող պայմանների վրա։ Եւ յետոյ, աւելացնում են նոյն օրգանները, միայն Ռուսաստանը և Եապօնիան չեն որ պիտի օգտվեն հաշտութիւնից, խաղաղութեան հարցում միայն երկու հակառակորդները շահագրգռված չեն, այլ միւս մեծ պետութիւններն ևս, մասնաւորաբար Անգլիան և Ֆրանսիան, որովհետև նրանք կուող կողմերի դաշնակիցներ են և ունեն որոշ շահեր։ Եթէ նրանք, իբրև զինակից, խաղաղութեան համար միջնորդելու գործում փափուկ դրութեան մէջ են գտնվում, կայ մի պետութիւն, որ իր ձեռքերը բոլորովին ազատ է զգում։ Դա Ամերիկան է։ Միացեալ-Նահանգների պետական քարտուղար Հէյը, որ թէ իբրև դիւանագէտ և թէ պետական անձ՝ մեծ և արդարացի հեղինակութիւն է վայելում միջազգային քաղաքականութեան հարցերում, ինչպէս հաւաստում է ամերիկան պարբերական մամուլի մի օրգան՝ l'American Mon. այնկարծիքն է յայտնում, որ ռուս-եապօնական այս պատերազմը, նայելով թէ վերջ ի վերջոյ ինչ ելք կունենայ, կարող է ամբողջ աշխարհի և բարոյական և նիւթական դիրքի մէջ մեծ փոփոխութիւն առաջ բերել։ Այդ պատերազմը արդարև պարունակում է իր մէջ այնպիսի պրոբլէմներ, որոնց կարելի չէ առանձին լուծում տալ. բոլոր մեծ պետութիւնները, ինչպէս և Միացեալ-Նահանգները՝ Հեռաւոր Արևելքում այնպիսի շահեր ունեն, որոնց ոչ մի կերպ չեն կարող ձեռքից բաց թողնել։ Ահա այս պատճառով էլ, վերոյիշեալ օրգանի յօդուածագիրը, միջամտութեան հարցը քննելով միջազգային իրաւունքի տեսակէտից, հանում է հետևեալ եզրակացութեան։ «Անկասկած, միջամտութեան իրաւունքին պէտք է դիմել միայն բացարձակ պարագաներում, այն ժամանակ, երբ մեծ ոճիրներ գործվում են հանդէպ մարդկութեան, ինչպէս օր. Յունաստանում, Հայաստանում, Կուբայում, կամ երբ, ազգային կամ համաշխարհային էական շահեր վտանգի մէջ են, ինչպէս օր. Թիւրքիայում, Ամերիկայում—Պանամայի մէջ Ռուս-եապօնական պատերազմի միջամտութեան հարցը այս վերջին դասակարգի նկատողութեան մէջ է մտնում։ ԵԲԷ Եապօնիան յաղթական է և իր յաղթութիւնից օգուտ է քաղում չափաւոր եղանակով, այդ դէպքում միջամտութեան առիթ չի ներկայանայ երբէք, թէպէտ և հաւանական է, որ պետութիւնները, նրանց մէջ լինելով Ամերիկան, պահանջեն տեղեակ մնալ վարվող բանակցութիւնների ընթացքի մասին և թելադրեն իրանց կարծիքն ու տեսակէտը։ Բայց, եթէ Եապօնիան իրան բաւական չափաւոր ցոյց չի տայ, այն ժամանակ շատ հաւանական է որ տեղի կունենայ պետութիւնների կողմից մի հաւաքական միջամտութիւն, պաշտպանելու համար իրանց շահերը Հեռաւոր-Արևելքում։»

Եթէ ամերիկացի հրապարակախօսի գուշակութիւնը իրականանայ, եթէ Եւրոպան միջամտէ չափաւորելու համար յաղթական Եապօնիայի ախորժակը, գուցէ խաղաղութիւնը երկարատև չը լինի։ Միևնոյն դէպքը պատահեց և չին-եապօնական պատերազմի ժամանակ, երբ Եւրոպան՝ Միկադոյի բանակի ու նաւատորմի քաղած դափնիները Եապօնիայի ձեռքից խլեց։ Դրանից յետոյ է որ Նիպպօնները լուռ և մունջ պատրաստվեցին այս սարսափելի պատերազմին։ Խաղաղութեան յարատևութեան համար անհրաժեշտ է երկու կողմերի սրտանց հաշտութիւն։

Ռուսաց զorfերի նահանջումը։ «Echo de Paris» լրագրին հեռագրում են Պետերբուրգից, որ ռուսական զօրքերի կէսից աւելին, հաւանօրէն I բանակը, յետ է նահանջում մանդարինեան ճանապարհով դէպի Դիրին. մնացած զօրքերը, որոնք ամեն օր ուժեղանում են Ռուսաստանից եկած օժանդակ զօրքերով, գնում են դէպի հիւսիս երկաթուղու երկարութեամբ։ Ռուսների համար չափազանց մեծ կարևորութիւն ունի իրանց ձեռքում ունեցած Դիրինը, որը հարուստ նահանգի կենտրոն է և ընդունակ է կերակրելու ռուսական ամբողջ բանակը։ Այդպիսի յետ նահանջումը երկու ճանապարհով վտանգաւոր է, որովհետև երկաթուղու և Դիրինի միջև հեռաւորութիւնը 120 վերստ է, իսկ ռուսական բանակը իր ներկայ դրութեամբ հազիւ թէ ընդունակ լինի պաշտպանելու 180 վերստ երկարութիւն ունեցող պատերազմական մի գիծ։ Բայց այլապէս չէ կարելի, որովհետև և երկաթուղին, և Դիրինը միանման մեծ նշանակութիւն ունեն ռուսների համար։ «Temps» լրագրի ասելով, գեներալ Լինեվիչի տակտիկան կայանում է նրանում, որ յետ նահանջելով, քանդէ անցած տեղի վրա թէ ճանապարհները և թէ կամուրջը և դրանով դժուարացնէ եապօնացիների հալածանքը։

«Сынъ Отчества» լրագրին հաղորդում են լաւատեղեակ աղբիւրից. «Մեր զօրքերի Մուկդէն թողնելուց մի քանի օր առաջ Ֆուշունի հանքերի ինժենէրները դիմեցին գեներալ Կուրոպատկինին խորհուրդ հարցնելու, թէ կարող են արդեօք տեղափոխել հանքերի համար նոր և թանգ գին ունեցող գործիքները։ Գեներալ Կուրոպատկինը պատասխանեց, որ տեղափոխելով մեքենաները, նրանք ոչինչ չեն կորցնում, որովհետև նա յամենայն դէպս Մուկդէնը եապօնացիներին չի տալ։ Մեքենաները, գլխաւոր հրամանատարի խորհրդի համաձայն, գնացքից ուղղակի ընկան եապօնացիների ձեռքը։ (Тлф.)։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, մարտի 4-ին

Փետրվարի 25-ին, հինգշաբթի առաւօտեան, Թաւրիզ ժամանեց Վեհափառից ուղարկված պատուիրակ Սինոդի անդամ Մատթէոս վ. Մատթէոսեան։ Երկրորդ օրը տեղապահ Մաշտոց վարդապետ պատգամաւորներին հրաւիրեց վեցերորդ նիստի։ Ժողովը տեղի ունեցաւ առաջնորդարանում՝ դռնփակ։ Ներկայ էին 14 պատգամաւորներ 22 ձայնով։

Օրակարգ. ա) Նախորդ նիստերի արձանագրութիւնների ընթերցանութիւն և հաստատութիւն։ բ) Ունկնդրութիւն ս. Էջմիածնից եկած պատուիրակի տեղեկութիւններին առաջնորդական ընտրութեան մասին։

Արձանագրութիւնները կարդալուց յետոյ մի քանի աննշան փոփոխութիւններ կատարվեցին և ստորագրեցին բոլորը։ Կարդացվեց յոտնկայս Վեհափառ Հայրապետի № 129 կոնդակը, ուղղված տեղապահ Մաշտոց վ. Փափազեանին, որի մէջ շեշտում է Սալմաստի փոխանորդութեան զգալի կարիքը և հրաւայում է անմիջապէս մեկնել իր պաշտօնատեղին. իսկ պատգամաւորական ժողովներին նախագահելը թողնում է Մատթէոս վարդապետին։

Նոյնպէս յոտնկայս կարդացվեցին Վեհափառի ուրիշ երկու կոնդակները, մէկը ուղղած թեմական ժողովի ատենապետին, միւսը Մատթէոս վարդապետին. բոլորի էլ բովանդակութիւնը քիչ տարբերութեամբ նոյնն էր։ Այդ բոլորից յետոյ հ. Մատթէոսը նստեց նախագահական աթոռի վրա և բարեհաճեց մօտաւորապէս հետևեալն ասել. «Պատահաբար ներկայ լինելով անցեալ նիստերի արձանագրութիւնների ընթերցմանը, կարող եմ հրապարակական գոհունակութիւնս յայտնել, որ պատգամաւորական ժողովը շատ կանոնաւոր և գիտակցաբար է վերաբերվել իր գործին, այդ մասին ուրախութեամբ կը զեկուցանեմ Վեհափառ Հայրապետին, քանի որ առանձնապէս բացի պատգամաւորական ժողովին նախագահելուց, ինձ հրամայված է տեղեկագիր և զեկուցում կազմել այստեղի ուրիշ գործերի մասին էլ»։

Ժողովը իր բարոյական պարտքը համարեց հրապարակական շնորհակալութիւն յայտնել հ. Մաշտոցին, որ մինչև այժմ կանոնաւոր կերպով վարել է ժողովի նախագահութեան պաշտօնը։ Հ. Մաշտոցը, նկատի առնելով Հ. Մատթէոսին ուղղված կոնդակում գործածած հետևեալ խօսքերը. «Որպէս մեզ հասանեն հաւանօրէն տեղեկութիւնք, գործք ընդհանուր վիճակին են յոյժ անկերպարան վիճակի» անձնական վիրաւորանք զգալով, մերժեց ընդունել ժողովի շնորհակալութիւնը, մինչև որ պատգամաւորական ժողովը ստուգէ, թէ այդ վիրաւորանքը ո՞րքան իրաւացի է։ Ժողովը կարևոր համարելով ամենից առաջ առաջնորդի ընտրութիւնը, այդ խնդրի քննութիւնը յետաձգեց առաջիկայ նիստերին։ Ժողովը փակվեց երեկոյեան ժամը 8-ին։ Ընտրութիւնը նշանակվեց կիրակի մայր եկեղեցում։

Փետրվարի 27-ին, կիրակի ժամը 12-ին, թեմական պատգամաւորական ժողովը նախ առաջնորդարանում ունեցաւ խորհրդակցական ժողով, ապա 12-ին մայր եկեղեցում, նախագահութեամբ Մատթէոս վ.-ի, կայացաւ եօթերորդ նիստը. ներկայ էին 16 պատգամաւորներ 25 ձայնով։

Նախ քան ժողովը բանալը հ. Մատթէոսը մի քանի խօսքով բացատրեց պատգամաւորների պարտականութիւնը, պատասխանատուութեան ծանրութիւնը և ապա առաջարկեց գաղտնի քուէարկութեամբ ընտրել թեմի համար արժանաւոր առաջնորդ։ Անմիջապէս ձեռնարկվեց ընտրութեանը։ Արդիւնքը եղաւ Բարդուղիմէոս եպիսկոպոս Գէորգեանի միաձայն ընտրութիւնը։

Անմիջապէս հեռագրվեց Նորին Ս. Օծութիւն Վեհափառ Հայրապետին հետևեալը. «Էջմիածին. Նորին Ս. Օծութեան. Միաձայն ընտրվեց առաջնորդ Ատրպատականի Բարդուղիմէոս եպիսկոպոս Գէորգեան. աղերսում ենք հաստատել և փութացնել գալուստը. Մատթէոս վարդապետ, պատգամաւորներ»։

Հեռագրվեց և ընտրեալին. «Էջմիածին. Բարդուղիմէոս եպիսկոպոս Գէորգեան. Շնորհաւորում ենք ձեր միաձայն ընտրութիւնը Ատրպատականի առաջնորդութեան։

Մ. Սահակեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

18 մարտի

ՏՕԿԻՕ, 19 մարտի։ Այստեղ լիակատար լռութիւն են պահպանում խաղաղութեան բանակցութիւնների մասին։ «Կոկումին» լրագիրը հարց է տալիս, թէ ինչ կը լինի Ռուսաստանին, եթէ նա շարունակէ այս աւերիչ և անմիտ պատերազմն իր հաճոյքի համար։ Պատերազմը շարունակելը կը լինի ոչ միայն կուրեացպօնիայի դէմ, այլ և բոլոր պետութիւնների միահամուռ կարծիքի դէմ։ «Ասախի» լրագիրը կարծում է, որ ֆրանսիական կառավարութիւնը զգալ է տուել, թէ ֆրանսիական ջրերում բալտիական էսկադրայի մնալն անյարմար է։ Լրագրի կարծիքով՝ դրանով պէտք է բացատրել անընդատակ շարժումներն այն նաւատորմի, որի անունը Ռուսաստանը դրել է խաղաղ Ովկիանոսի II էսկադրա։

ԲԵՐԼԻՆ, 17 մարտի։ Պարիզում միտք է ծագել կոնգրէս հրաւիրելու խաղաղութեան մասին բանակցութիւններ անելու համար։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 17 մարտի։ Միացեալ Նահանգների վարչութիւնը մի քիչ փոփոխել է իր այն որոշումը, որի հիման վրա ինքը խառնվելու չէր խաղաղութեան գործին, մինչև որ Ռուսաստանը կամ Եապօնիան չը խնդրեն։ Այժմ Միացեալ Նահանգները պատրաստ են անելու այն ամենը, ինչ որ կարող էր ընդունելի լինել մէկ կամ միւս կուռող կողմերից։ Կառավարութիւնը սաստիկ շահագրգռված է այն ամենով, ինչ որ շօշափում է ամերիկեան շահերը և այդ պատճառով բողոքում է խաղաղութեան կոնֆերէնցիայի դէմ, որի արդիւնքը ոչ ոք չէ կարող նախատեսել։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 17 մարտի։ Ամերիկեան աշխատում է ծանօթանալ եապօնական պահանջների հետ։ Ամերիկեան լրագիրները յայտնում են, որ չը պէտք է խախտել Չինաստանի անձեռնմխելիութիւնը։

ՍՈՒԽՈՒՄ, 18 մարտի։ Երէկ երեկոյեան ժամը 10-ին զինված յարձակում գործվեց Մալանիէ ամարանոցի վրա կողոպուտի նպատակով։ Յարձակվողները, որ 10 հոգի էին, կողոպտելով փողերը և արծաթէ ու ոսկէ իրերը, փախան։

ԲԵԼԳՐԱԴ, 18 մարտի։ Բիտոլիի օտար հիւպատոսներն ստացան բուլգարական կենտրոնական կազմակերպութեան շրջաբերական նամակը, որով յայտնում է, որ ձեռք է առնելու ամենաեռանդուն միջոցներ, Մակեդոնիայում յունական շարժման դէմ։ Բուլգարական կազմակերպութիւնը մեղադրում է Բիտոլիի յունական հիւպատոսին և մէտրոպոլիտին մակեդոնական յոյներին բուլգարո-մակեդոնական կազմակերպութեան դէմ գրգռելու մէջ։

ԼՕՆԴՕՆ, 18 մարտի։ «Թայմսը» Մարոկկոի հարցի առիթով իր առաջնորդողում ասում է, որ եթէ Վիլհելմի «Ֆրէնդէմբլատտ» լրագրի նման թերթն էլ, մի կողմ թողնելով իր սովորական զգուշաւորութիւնը, յայտնում է, որ Բիւլովի ճառը մարոկկեան հարցի առիթով աւելի ևս ուժեղացնում է Մարոկկում համակրութիւնը դէպի կայսրի ուղևորութիւնը, և որ Ֆրանսիան այժմ համոզվել է, որ Վիլհելմ կայսրի մտադրութիւնները խաղաղասիրական և արդար են,—ուրեմն՝ ժամանակը հասել է, որ միւս շահագրգռված ազգերն էլ կարծիք յայտնեն։ «Ֆրէնդէնբլատտը» այդ եզրակացութեան եկել է, չը գիտենալով, որ Տանժէրի բրիտանական հաւատարմատարը ֆրանսիական նաւով է դուրս գալու անգլիական թագուհուն դիմաւորելու։ Այդ նշանակալի դէմոնստրացիան ցոյց է տալիս մեր հաստատուն վճռականութիւնը ճշդութեամբ գործադրելու Ֆրանսիայի հետ կնքած մեր դաշնագիրը և նրան ցոյց տալու խոստացված օժանդակութիւնը։ Բրիտանական ժողովուրդը չափազանց բարձր է գնահատում Ֆրանսիայի հետ իր համաձայնութիւնը, և ֆրանսիական ու անգլիական նաւատորմերի առաջիկայ փոխադարձ այցելութիւնները յարմար դէպք են ներկայացնում երկու ազգերի սրտագին բարեկամութիւնները հաստատելու համար։ Անգլիան համոզված է, որ Ֆրանսիայի հետ իր դաշնակցութիւնը խաղաղութեան գլխաւոր պատնէշներից մէկն է։ Ինչպէս երևում է, Վիլհելմայում այն կարծիքն է տիրում, որ Գերմանիայի առաջացրած այդ վիճելի հարցում մենք Ֆրանսիային անօգնական կը թողնենք։ Եթէ այդպիսի համոզմունք դեռ շարունակում է գոյութիւն ունենալ, մենք չենք յապաղի ամեն ինչ անել, որ անմիջապէս հերքենք այդ միտքը»։

ՏԱՆԺԷՐ, 18 մարտի։ Այս առաւօտ Վիլհելմ կայսրը «Համբուրգ» շոգենաւի վրա, «Ֆրիդրիխ-Կարլ» կրէյսէրի ուղեկցութեամբ մտաւ նաւահանգիստը։ Ֆրանսիական կրէյսէրներից և քաղաքային բատարէայից ողջոյն տուին։ Վիլհելմն ամբ իջաւ և ժողովրդով լցված փողոցներով անց կացաւ, ձի հեծած, դէպի պալատ. ամեն կողմից «կեցցէ» աղաղակներ էին թնդում։

ԱԴԷՆ, 18 մարտի։ 16 ածխատար նաւեր իրար ետևից մեկնում են Ջիբուտիից փակ ծրարների մէջ հրամաններ տանելով։ Ենթադրում են, որ նրանք մեկնում են կամ Բատավիա կամ Դաիէգո-Գարսիա։ Ինչպէս հաղորդում են Պօրտ-Լուիսից (ս. Մավրիկիոսի կղզու վրա), Բալտիական նաւատորմի ածխատարները Բատավիայի վրայով գնում են Հոնգկոնգ։

19 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բագուի նահանգին սպառնում է խօլերան։

ԲԱԴՈՒ, 18 մարտի։ Տէխնիկական ընկերութեան ընդհանուր ժողովը վճռեց. 1) Պատգամաւորութիւն ընտրել, առաջադրութիւն անելու համար սենատոր Կուզմինսկուն՝ Բագուի դէպքերի քննութիւնը կատարելու կարգի մասին. 2) Հերքումներ ուղարկել մայրաքաղաքի մի քանի լրագիրներին տեխնիկական ընկերութեան վերաբերեալ թղթակցութեան առիթով։

Կ. ՊՕԼԻՍ։ Այստեղ ժամանեց աբիսսինիական միսսիան ընծաներով Մէնէլիքից սուլթանին, որոնք բաղկացած են զանազան հազուագիւտ կենդանիներից և տասը փղի ժանիքներից։ Հաւատացնում են, որ միսսիան կը յայտնէ սուլթանին Մէնէլիքի հաղորդագրութիւնը համիսլամական գործունէութեան վերաբերմամբ, որ սուլթանը ցոյց է տուել արդէն մի քանի տարիների ընթացքում։

ՕԴԷՍԱ։ Ժամանեց 19 մարդուց բաղկացած պօրտ-արտուրցիների տասերորդ խումբը։

ՊԱՐԻԶ։ Այստեղի դիպլոմատիական շրջաններում խօսում են, որ անգլիական զինուորական մինիստրութիւնը կարգադրութիւն արեց, որ ըստ կարելւոյն շտապեցնվեն կարճափող նոր հրացաններ պատրաստելու աշխատանքները։ Հնդկաստանում շտապում են կառուցանել այն զինարանը, որը կիրագործէ անգլո-հնդկական զօրքի վերազինումը։

ՍՕՖԻԱ։ Կիւստենդիլում և Դուբնիցում իշխանութիւնները ձերբակալեցին 12 անձանց, որոնք աշխատում էին հատ հատ անցնել սահմանից դէպի Թիւրքիա՝ չէտաների հետ միանալու համար։ Զինուորական և ներքին գործերի մինիստրների շրջաբերականների համաձայն, այդ անձինք վերադարձվեցին երկրի ներսը։

ԳԻԲՐԱԼՏԱՐ, 18 մարտի։ Կէսօրին Ալէքսանդրա թագուհին իր զրօսանաւով ճանապարհ ընկաւ Գիբրալտարից։ Այսօր երեկոյեան սպասում են Վիլհելմ կայսրին Գիբրալտար ժամանելուն։

ՏԱՆԺԷՐ, 18 մարտի։ Գերմանական միսսիայում ընդունելութիւն կայացաւ։ Վիլհելմ կայսրը սիրալիր կերպով խօսակցեց Մուլէ-Արդէլ-Մէլիքի և սուլթանի ուրիշ պատուիրակների հետ և նրանց հետ երկարատև խօսակցութիւն ունեցաւ։ Ապա կայսրը ժամանաւոր ունկնդրութեան ընդունեց դիպլոմատիական մարմինը, հիւպատոսներին և տիկիններին։ Ընդունելութեան ժամանակ տեղի ունեցէ շրջակայ տեղացիների ազգային տօնախմբութիւնը շուկայի հրապարակի վրա։ Ընդունելութիւնից յետոյ կայսրը ճանապարհ ընկաւ։ Երեք օր շարունակ տեղի կունենան տօնախմբութիւններ և լուսավառութիւն։—Կայսրի պատասխանի մէջ Լօնդոնի գերմանական կօլոնիային տեսնում են սպառնալիք անգլո-ֆրանսիական համաձայնութեան Մարոկկոի վերաբերմամբ։

ՏՕԿԻՕ, 18 մարտի։ Գլխաւոր շտաբի հրամանատարի օգնական գեներալ Նագօկա իր դեկուցման մէջ արևելեան ընկերութեան, որ կռիւը, Մուկդէնի մէջ ամենամեծ կռիւն է համաշխարհային պատմութեան մէջ։ Կռիւը շարունակվում էր 14 օր։ Այդ կռիւն մասնակցում էին 850 հազար մարդ. Լեաօեանի մօտ մասնակցում էին 460 հազար, Շախէի մօտ—580 հազար։

ԼՕՆԴՕՆ։ Այստեղ մեծ նշանակութիւն են տալիս այն փաստին, որ Պարիզից ռուսական գործակալների պատուէրներ են ստացված Լօնդոնում էլի մի քանի ածխատար նաւեր վարձելու համար, որոնք պէտք է ուղևորվեն դիմաւորելու բալտիական էսկադրային։ Պայմանագիրը այն պայմանով է կապված, որ ածխատար նաւերը Բատավիայից աւելի հեռու չը պէտք է գնան արևելեան ուղղութեամբ։ Մի ածխատար Վլադիվոստոկ ուղարկված վեց ածխատար նաւերին մանրամասն հրամաններ կը տրվեն մերձակայ նաւահանգստում, ուր նրանք կանգ կառնեն, միանալու բալտիական էսկադրային որոշված տեղում։ Այդ նաւերից երկուսն արդէն հասել են Կօլոմբօ և Սինգապուր։ Այդ փաստերն ընդունվում են այստեղ իբրև ցուցում շուտով խաղաղութիւն կնքելու։

ՊԱՐԻԶ։ Նախքան Մարոկկոի մասին եղած հարցապնդումներին պատասխանելը, Դելկասսէն ցանկութիւն յայտնեց մասնաւոր խօսակցութեան մէջ բացատրվել հարցապնդումների հեղինակների հետ։

ՋԻՏԱ, 15 մարտի։ Բարգուզինսկի գաւառի ամենահեռաւոր խիտ անտառներում, ուր բացի որոնող բանաւորներից և թափառական այլացեղ—կռապաշտներից ուրիշ ազգաբնակութիւն չը կայ, առաջին անգամ հնչեց զանգակի ձայնը եկեղեցում, որ շինել է ոսկեվաճառ Եակով Դաւիդովիչ Ֆրէզէտը։ ոսկի որոնող ազգաբնակութեան համար։

ՏԱՆԺԷՐ, 18 մարտի։ Կայսր ժամանեց առաւօտեան ժամը 9-ին։ Նա մի քիչ յոգնած տեսք ունի։ Կայսրը յայտնեց իր զմայլանքը եղած ընդունելութեան առիթով։ Ժամը 3-ի մօտ նա կը մեկնի դէպի Գիբրալտար։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Պաշտօնապէս հերքվում է այն լուրը, որ իբր թէ Ռուսաստանը և Եապօնիան Ռուզվէլտին առաջարկել են իր վրա առնել միջնորդութիւնը։

ԳԻԲՐԱԼՏԱՐ։ Գերմանական «Ֆրիդրիխ» զրահակիրը նաւահանգստի մուտքում զարնվեց անգլիական «Պրինց-Դէօրգի» զրահակրի հետ։ Երկուսն էլ թեթև վնասներ ստացան։

ԲԵՐԼԻՆ։ Որովհետև անգլիացիները վրդովվում են, որ նախկին պրէտէնդէնտ Բայսուլլահն իբր թէ Տանժէրի գերմանական դեսպանի միջնորդութեամբ ստացել է ազատ ճանապարհ գերմանական կայսրին դիմաւորելու համար,—այդ առիթով «Nordd. Allg. Z.»-ը ասում է, որ Մարոկկոի կառավարութիւնը հրաւիրել է Բայսուլլահին, իբր շրջանի նահանգապետ, մասնակցելու կայսրին դիմաւորելու հանդէսին։—Այն լուրի առիթով, որ իբր թէ Եապօնիան Ռուզվէլտի վրա է դրել միջնորդի դերը, այդ առիթով եապօնական կառավարութիւնը յայտնում է, որ իրան ոչինչ յայտնի չէ այդ մասին։—Հրատարակված է ջերմ կոչ գերմանական Կարմիր Խաչի կողմից, որ հրաւիրում է նուէրներ տալ Մանջուրիայի ռուս վիրաւորների օգտին։

ՏԱՆԺԷՐ։ Գերմանական կայսրը հասաւ այստեղ առաւօտեան 8 ժամին։ Ֆրանսիական զինուորական նաւերը թնդանօթաձգութեամբ ողջունեցին կայսրի գալուստը։ Ծովի խիստ անհանդարտ դրութեան պատճառով՝ ափ իջնելը տեղի ունեցաւ ժամի 12-ին։ Սուլթանի ներկայացուցիչները և դիպլոմատիական մարմինը դիմաւորեցին կայսրին ծովափում։

ԱԼԺԻՐ։ Ամերիկական մինիստր Գէյ մեկնեց դէպի Նէապոլ։

ՄԱՐՍԷԼ։ Պնդում են, թէ անգլիական արքայական զոյգը ափ կիջնի Մարսէլում Կօպէնհագէնից վերադառնալիս, որտեղ Էդուարդ թագաւորը և թագուհին պէտք է հանդիպեն միմեանց։ Էդուարդ թագաւորը կամենում է անցնել Ֆրանսիայով անմիջապէս Վիլհելմ կայսրի Տանժէրից անցնելուց յետոյ։ Այդ քայլը նախերգանք է ֆրանսիական և անգլիական նաւատորմերի հանդիպման Սպիդհէդի ջրերում. այս հանդիպումը որպէս թէ վերջնականապէս որոշված է և տեսնվում են հսկայական նախապատրաստութիւններ։

Կ. ՊՕԼԻՍ։ Պատրիարքարանում ճգնաժամը վերջացած է։ Բ. Դուռը հաւանութիւն տուեց ութ միտրոպոլիտների վերադարձին դէպի իրանց թեմերը։—Խօսում են ալբանական շարժման մասին Կոսսովի վիլայէտում, մանաւանդ այնտեղ, ուր վիլայէտի սահմանները կից են Ալբանիային։

ԻՕՀԱՆՆԷՍԲՈՒՐԳ։ Միլներ, խօսելով հանդիսաւոր ճաշկերոյթի ժամանակ հարաւ-աֆրիկական քաղաքականութեան և անգլիացիների ու բօէրների լիակատար հաւասարութեան մասին, ասաց. «Մենք աչքի առաջ կունենանք բօէրների պահանջները, բայց ամենագլխաւոր կէտերում երբէք չենք զիջանի»։

ՖՐԻՏՕՈՒՆ։ Այստեղից ուղարկվեց մի զինուորական արշաւախումբ բացառապէս կիսսիկիսսի ցեղի դէմ գործելու համար։

ԱՍԽԱԲԱԴ։ Այն մօլոկանները, որոնք քիչ ժամանակ առաջ գաղթել են Անդրկասպեան երկիրը, սկսեցին վերադաղթել դէպի Ամերիկա։ Պատճառը մորեխն է և հացահատիկների վատ հունձը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ամենահպատակ հեռագիր ինֆանտերիայի գեներալ Լինեվիչից յանուն Նորին Կայսերական Մեծութեան 1905 թուի մարտի 18-ից. «Բանակների մէջ փոփոխութիւն չը կայ»։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒԷԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
ՁԻՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի. ներքին և նեարդային
Մ. Դ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներակ և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԴԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Դ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ՍԱԼՕԼՕՎ ատամնաբոյժ. 9—11 ժ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՇԵՐԲԻՆԻՆԱ—1½-2 ժ. մանեաբարձութեան և կանանց հ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.
Պ. Ա. ԱՐԳԱՋԻԱՆԻ. Կատարում է միկրո-քիմիական և բակտերիոլոգիական հետազօտութիւններ։
Օ. Ա. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—ատամ. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցում ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ։
Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի.

ԲԺՇԿԱԳԵՏ
Բ. Նաւասարդեան
Տեղափոխվելով Թիֆլիսից ՐՕՍՏՕՎ
Հիւանդներին ընդունում է 11—12 ժ. առ. և 7—8 ժ. երեկոյեան։
Б. Садовая, 136, д. Бакалова.
(ռ. կ. Ե. հ.) *95—100*

ԿԱՐՃ ԺԱՄԱՆԱԿՈՒՄ
Բերլիցի մեթոդով osurախսսներին *սովորեցնում եմ հայերէն և ֆրանսերէն նոյնպէս և՝ թուաբանութիւն ու աշխարհագրութիւն։*
Հասցէն թողնել Веліаминовская № 24 кв. Заргаріанцъ. *չ. ռ. կ.* *3—3*

Նոր լոյս տեսաւ
Ք. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՑԻ
մշակած հայկական երգերի
Երկրորդ տեսրը
որը պիանոյի համար ներդաշնակել է
ԼԷՕՆԻԴ ԿՆԻՆԱ
Առաջի տետրի գինն է՝ 1 ր., երկրորդի՝ 75 կ., երկու տետրն էլ վաճառվում են Լանկոյի երաժշտական և «Գուտտենբերգի» գրավաճառանոցներում, «Պուզրէսս» խանութում և հրատարակչի—Ք. Կարա-Մուրզայի (ул. Панасевича № 8) *մօտ. նրա մօտ է և պահեստը։*
5—10

Ծանուցվում է իւրաքանչիւր ազգայնոց, թէ Թիֆլիսի սըրբազան առաջնորդի նախագահութեամբ կազմված է մի Ցանձնաժողով Զխարի հրկիզեալներին համար նուիրաբերութիւններ ընդունելու և գործադրելու։ Ժողովի անդամներն են՝ տ.տ. իշխանուհի Մ. Թումանեան, Մ. Մղաբեուլեան, Վ. Եսայեան, պ.պ. ճարտարապետ Ն. Գրիգորեան, երդ. հաւատարմատարի օգնական Մ. Մնացականեան, բժ. Ն. Կաճկաճեան։
Հրկիզեալներին օգնելու պաշտօնական թոյլտուութիւնն ստացված է Թիֆլիսի պ. նահանգապետից։
Խնդրում ենք նուիրաբերութիւններն ուղարկել Ցանձնաժողովի գանձապահ իշխանուհի տ. Մ. Թումանեանին, Բարեատինսկայա, № 8։ *4—5*

Պահանջեցէք ամեն տեղ «ՕԴՕԲՐԻՆ»,
Միայն Միխաի։ Լեբեդեվի
«Этикетъ утвержденъ прав.» *ժակագրութիւնով։*
Ոչ մի ազնիվ տիկին չպիտի ամաչի գրասեղանի մոտ նստած կոշտերը և արմատները։
Գլխաւոր պահեստատեղին դեղագործական ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բաքու, Բաթում։
10, 20, 30 *7—36*

Բժիշկ Ա. Միխիթարեանց

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վենէրական ախտ ունեցող հիւանդներ ամենայն օր, առաւօտ. 12—2. երեկոյեան 6—8 Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանովի, դեղատան կից։ (տ. օ.) 40—80

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ

նախկին ординаторъ Մոսկվայի համալսարանի կլինիկայի

Ընդունում է յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին։ Ընդունելութիւնն ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 6—8 ժամին երեկոյեան։ Ռոժդեստվենսկի փող. № 1, «պոժարնի կոմանդի» դիմացը. տելեֆոն № 711. (տ. օ.) 9—10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Ա. Ստեփանեան

Ընդունում է առաւօտեան 9—2 և 5—7, Վելամինսկայա փ. № 8.

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Ա. ՀԱԽՎԷՐԴԵԱՆ

Մասնագէտ միզային և սիֆիլիտիկական հիւանդութիւնների,—ընդունում է հիւանդներին առաւօտեան 12 ժ.—1 ժ. երեկոյեան՝ 6 ժ.—9 ժ.։ Կուկիա, Սեմեոնովսկայա փ. № 20. (ռ. կ. ե.) 24—30

Լոյս է տեսել և վաճառվում է

ԽԱԺԱԿ
«ՀԱՐԿԵՐԸ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ»

Գինն է 40 կոպէկ

Դիմել Թիֆլիս—«Գուտենբերգ» գրախանութը։ Առնուազը 5 հատ ցանկացողը կարող է դիմել հեղինակին, «Մշակ»-ի խմբագրութիւն։

Ցանձնված է մամուլին

Ի. ՎԱՀՈՎԻ

ԼԾԻ ՏԱԿ

Վէպի երկրորդ մասը, թարգ. Ցովհ. Առաքելեանի

Պահեստը լինելու է բացառապէս «Գուտենբերգ» գրավաճառանոցը։ 2—2

Թիֆլիսի Կանանց Ընկերութեան

ԿՕՄԻՏԷՏԸ

որ իր վրա է առել Հեռաւոր Արևելքում հիւանդանոց շինել կովկասցի վիրաւոր և հիւանդ զինուորների համար, յայտնում է իր անդամներին և այդ գործին համակրողներին, որ ընկերութեան ընդհանուր ժողովները տեղի են ունենում ամեն շաբաթ, կիրակի օրերը, ցերեկվայ ժամը 12-ին, նահանգական դատարանի շէմքում։

Հիւանդանոցի համար

ՆՈՒԷՐՆԵՐ

ընդունում է յիշված ընկերութիւնը հետևեալ անձերի մօտ.

Սագարդա—Պասերբսկայեայի մօտ, Լերմոնտովսկի փող. սեփ. տուն։

Դաւիդովիչի մօտ, Կօբիյակի փող. № 5.

Ասեեվայի մօտ, Կիրպիչնի փող. № 26.

Պետրոպալովսկայեային, Լաբօրատօրնի փող. № 11, (ժամը 10—12 առաւ.)։

Այտովսկայեայի մօտ, Բարօնսկաա № 16, (ժամը 4-ից սկսած)։

Զապլիցի մօտ, Կիրօչնի փող., Ամարային կրուժոկի մօտը (ժամը 3—4)։

Սերաշկեվիչի մօտ, Անդրէեվսկի փող. № 27 (ժամը 3—4) 2—5

Յայտարարվում է

ի գիտութիւն թարգմանիչների, որ թարգմանել եմ Ֆելիքս Դրայի

«ՄԱՐՍԵԼԼԻԱՑԻՆԵՐ»

(Les rouges du Midi) վէպը և յանձնել մամուլին։

Մ. Ղարաբէկեան

Թէհրան. 3—3

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. Գ. Շերմազանեանց

ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 3—6։

Երևանեան հրապարակ, տուն Արզումեան, լուսանկար Լալայեանցի բնակարան։

Կարապետ Օղաբաշեանի նաւթի պահեստում ծախվում է Եղ. Նօբելների ֆիրմայի նաւթ ամենաէժանացրած գներով և

ՄԱՔՐԱԾ ԲԷՆԶԻՆ
ֆունտը 4 կոպէկ

Նիկոլաեվսկի և Նեկրասովսկի փողոցների անկիւնում, № 42։ 1—1

Թիֆլիսի Նահանգական ազնուականութեան Պարագլխի պաշտօնակատարը յայտնում է նահանգի պ.պ. ազնուականներին, որ մարտի 31-ի առաւօտեան ժամը 11-ին իշխան Կօբուլովի տանը (Գրիբոյեդովսկի փող.) կայանալու է Նահանգի Ազնուականութեան արտակարգ ժողով։

Արտակարգ ժողովի զբաղմունքի առարկաներն են. 1) Նահանգի ազնուականութեան կողմից ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆԸ ամենահպատակ ուղերձ ներկայացնելու մասին։ 2) Քննել և մշակել միջոցներ հանգստացնելու Թիֆլիսի նահանգի երկրագործ ազգաբնակութիւնը։ (կ. չ. ռ.) 1—3

Որոնում եմ եղբորորդուս Անտոն Օքրոպիրովիչ Խեցուրիանի 18 տարեկան, որը դուրս է եկել Յունվարի 29-ին և այնուհետև չէ վերադարձել։ Ով որ նրա մասին որ և է տեղեկութիւն ունի, խնդրեմ հաղորդէ, Սլէպցովսկի փող. № 4 բնակարան Զէլինիցկու։ 1—1

Մայն 10 օր

(Մարտի 21-ի երկուշաբթի օրվանից սկսած)

ԱՌԱՆՁՆԱՊԷՍ
ԷԺԱՆԱՑՐԱԾ ԳՆԵՐՈՎ

կը ծախվեն ամեն տեսակի դիւանական և աշակերտական պարագաներ, շնորհաւորական և այցետոմսեր և ուրիշ շատ իրեր։ Իշխան Պասկեվիչի գործարանի թղթի պահեստի մագազինում, Գոլովինսկի պրոսպեկտ, Արտիստական ընկերութեան շէնքի մէջ։

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Թիֆլիսի ժողովարանի աւագների ժողովը տեղեկացնում է պ.պ. անդամներին և կանդիդատներին, որ նրանց ընտանիքների անդամներին կը թողնեն սիրողների ներկայացումներին և ընտանեկան երեկոյթներին միայն այն ժամանակ, երբ նրանք ցոյց կը տան այն կօնտրոլյորները, որ տրվում է ժողովարանի գրասենեակում ամեն օր երեկոյեան 8—11 ժամին։ (20, 24 և 27-ին) 1—3

ՄՈՂՆՈՒ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ

երեցփոխը այսու յայտարարում է, որ առաջիկայ կիրակի, ներկայ մարտի 20-ին, ս. պատարագի ժամանակ, մօտ կէսօրին, յատուկ հրաւէրքով։

ՔԱՐՈԶ է խօսելու ԲԵՆԻԿ վարդապետը այս ընթրանով՝ «Զի դուք յաղատութիւն կոչեցեալ էք, եղբարք, միայն զի ազատութիւն ձեր ոչ լինիցի ի պատճառս մարմնոյ, այլ սիրով ծառայեցէք միմեանց (Գաղատացւոց թուղթ, ե. 13)։ 2—2

Թարգմանված է և շուտով կը յանձնվի տպագրութեան

Լ. Ն. Տոլստոյի

«ԿՐԵՑՑԵՐԵԱՆ ՍՕՆԱՏ»

Թարգմ. Մ. Մ. Ղազարեան։

ա. օ. 2—5

Կենտրոնական

Գրավաճառանոցում վաճառվում են հետևեալ գրքերը.

Աղանեան Գ. քահ. «Նամակագիրք», Թիֆ. 50 կ.
Ա. Թ. «Մոհարարուհի» (կերակուր պատրաստելու ձեռնարկ), Թիֆլիս, գ. 50 կ.
Աղայեան Ղ. «Հէքիաթներ» Ա. և Բ. մասը, իւրաք. գ. 20 կ.
Արաբի. «Գերբն. հիւանդութիւն», Թիֆլ. 20 կ.
» «Սրբազան ժամեր», Թիֆլիս, 20 կ.
Բազ-Աղաջանեան. «Լեգենդներ» Բ., 5 կ.
Դեմիրչեան Դ. «Ուխտաւորներ», աշուղի հէքիաթք, Թիֆլիս, 7 կ.
Եսայեան Մ. «Մի բուբլի (պատկեր Բալախանու կեանքից), Թիֆլիս, 3 կ.
Եսայեան Յ. «Թշուառներ», Թիֆլիս, 8 կ.
Լէօ. «Կարմիր գղակը», Բ. 3 կ.
Խաժակ. «Հարկերը Տաճկաստանում», Բ. 40 կ.
Մանիկեան Յ. «Դժողք», Թիֆլիս, 40 կ.
Ճուղուրեան Յ. քահ. Դիւղի այրին, Թիֆ. 15 կ.
Զէմս Մօրիէր, Հաջի Բաբայի արկածները Պարսկաստանում, Թիֆլիս, 2 ր.
Սմբատով Իշխ. Ա. «Դաւաճանութիւն», (դրամ. լեգ. Վրաստանի անցեալից հինգ արար.) Թարգմ. Ա. Ծատուրեանի, Թիֆլիս, 50 կ.
Տ. Վ. «Նինի հատար» (ռուսերէնից թարմ. Յ. Եսայեան, Թիֆլիս, 3 կ.
Տէր-Աստուածատրեան Հ. Բառարան հայ կենսագրութեան, Թիֆլիս, 70 կ.
» «Խաչատուր Աբովեան», Թիֆլ. 5 կ.
Տիգրանեան Ս. «Հոգեբանութեան հիմնական գաղափարների մասին, Վաղարշապ. 40 կ.
Փափազեան Վ. «Երկու թռչուն», Թիֆլ. 3 կ.

Դիմել Тфлисъ. Центральную книжную Торговлю. (4) 1—1

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. Յ. Քաթանեան

ընդունում է ներքին եւ ջղային հիւանդութիւններ ունեցողներին առաւօտեան 9—12 ժամը և երեկոյեան 5—7 ժամը։

Վելիամինովսկի փողոց տ. Սաֆարեանի, № 13. III գիմնազիային կից (կ. ե. հ.) 17—20

Պատրաստում

և պարապում ենք բոլոր միջնակարգ դպրոցների բոլոր առարկաներից. կարելի է և գիշերօթիկ։ Աւշալեան փող., տուն 53, ուսանողներ՝ Հ. և Կ. (ե. հ. կ.) 4—15

ԲԺ. Գ. Ի. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ

ղեկավարութեամբ Աբասթումանում մայիսին բացվում է

ՊԱՆՍԻՕՆ-ՍԱՆԱՏՕՐԻՈՒՄ

Օդաբուժութիւն։ Բժշկումն հանգստութիւնով։ Սաստկացրած rsնումն։ Ընդունվում են թոյլ կուրծքի տէր և թոքերի սկզբնական ատաճանի թոքախտ ունեցող անձեր։ Որովհետև տեղը սահմանափակ է, ցանկացողները պէտք է գրվեն այժմ։ Գրվելու վերջին ժամանակ միջոցն է ապրիլի 15-ը։

Մանրամասն պայմանների մասին դիմել բժշկին—Միքայէլեան պրոսպէկտ, № 154, Թիֆլիս։ Է. շ. հ. 2—3

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ» — «MESSAGERIES MARITIMES».

28-ին մարտի (10-ին ապրիլի ըստ ն. տ.) մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 5-ին, «Crimée» շոգենաւը, հանդիպելով Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Պիրէյ, Մարսէյլ, Հավր և Լոնդոն։

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները՝ մինչև Պարիզ, նոյնպէս և մինչև Շանղհայ (Զինաստանում), կարելի է ստանալ Թիֆլիսում պակասեցրած գներով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել ընկերութեանս Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, նախկին Արծրունու գալերէյում, թիւ 127 դրասենեակը, հեռախօս՝ թիւ 608։ Դրասենեակը բաց է 9—1 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան, բացի կիրակի օրերից։ 1—1

ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Նրանց կեանքը և գործերը (նմուշներով)

I Բանաւոր գրականութիւն. Գողթան երգեր, ժողովրդական երգեր, աշուղի երգեր, Սասյաթ-Նովա։

II Գրականութիւն. Տառերի գիւտը (Սահակ, Մեսրոպ)։

Գրականութիւնը V դարում. (Բիւզանդ, Ագաթանգեղոս, Եղիշէ, Խորենացի, Փարպեցի և այլն)։

Հ. գրականութիւն արաբական շրջանում. Կաղանկատվացի, Յովհ. կաթող. Թոմա Արծրունի, Ասողիկ. Լաստիվերտցի և այլն։

Հ. գրականութիւնն Ռուբինեանց օրով. Բանաստեղծութիւն, պատմագրութիւն և վարդապետական գրուածներ։

III Անկման շրջան. Քուչակ նահապետ և երգերը։

IV Վերածնունդ. Մխիթարեաններ (Վենետիկ և Վիեննայի), Ալիշան, Պէշիքթաշլեան, Դուրեան, Պարոնեան, Սրուանձտեան, Ծերենց և այլն։

Արեւելեան բաժին. Աբովեան, Նազարեան, Նալբանդեան, Ռ. Պատկանեան, Շահազիզ Պուշեան, Գ. Բարխուդարեան, Սունդուկեան, Աղայեան, Բաֆֆի, Շիրվանզադէ, Մուրացան Լէօ, Ահարոնեան, Պալասանեան, Երիցեան, Յ. Յովհաննիսեան, Ծատուրեան, Թումանեան՝ Իսահակեան, Շանթ և այլն։

Միջնակարգ դպրոցների համար կազմեց Գ. Վանցեան, գինն է 1 բուբլի, ճանապարհածախսով 1 բուբլի 30 կոպէկ։

Դիմել՝ Թիֆլիս. Коммерческое учил. Ванціанъ կամ Թիֆլիսի գրավաճառներին։ 9—11

Կայքերը կրակից փոխադարձաբար ապահովագրելու Թիֆլիսի ընկերուրէան Վարչութիւնը

տեղեկացնում է ընկերութեան պ.պ. անդամներին, որ կիրակի, մարտի 20-ին, առաւօտեան ժամը 11-ին քաղաքային դումայի դահլիճում լինելու է

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

մարտի 6-ին չը կայացածի փոխարէն. այդ ժողովում քննութեան են ենթարկվելու այն բոլոր հարցերը, որ նշանակված էին մարտի 6-ի համար, բացի ընդհանուր ժողովները ապահովագրողների լիազօրների ժողովներով փոխարինելու հարցից, որ հանված է քննութեան հերթից։

Դրա հետ միասին Վարչութիւնը պատիւ ունի յայտնել պ.պ. անդամներին, որ ընկերութեան կանոնադրութեան § 27-դ յօդուածի հիման վրա՝ նշանակված ժողովը, յամենայն դէպս, օրինականապէս կայացած կը համարվի, չը նայելով եկած անդամների թիւին։ 12, 20

Магазинная вывѣска
Рисунокъ утв. Отд. пром. и торг.
М. Фин.

ШВЕЙНЫЯ МАШИНЫ
ШВЕЙНЫЯ МАШИНЫ
ШВЕЙНЫЯ МАШИНЫ

КОМПАНІИ ЗИНГЕРЪ

Необходимы для домашняго употребленія. Образцовы въ конструкціи и исполненіи. Продаются только въ магаз. Комп. Зингеръ.

Отпускъ машинъ съ платежемъ **отъ 1 рубля въ недѣлю.**

Безплатное обученіе шитью и моднымъ художественнымъ вышивкамъ.

Остерегайтесь поддѣлокъ!

Ручныя машины съ высокимъ рукавомъ во всѣхъ нашихъ магазинахъ отъ 25 руб.

Болѣе 1200 собственныхъ магазиновъ по всей Россіи!

фабричное клеймо которымъ снабжены машины.

ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԶԻՆԳԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Վաճառվում են միայն Ընկերութեան սեփական խանութներում։ Աւելի քան 1200 խանութ Ռուսաստանի Կայսրութեան ամեն քաղաքներում։ Խանութները ճանաչվում են Ռուսաց «Զ» տառը ձևակերպող ցուցանակներով, համաձայն ֆինանսների մինիստր.—Արդիւնաբեր. և Առևտր. բաժնի հաստատած նկարին։ Զգուշացէք կեղծիքներից։ Մեքենաները տրվում են սկսած շաբաթական 1 բուբլի վճարից։ Կ. 1—25

Дозволено цензурою. Тифлисъ, 19-го Марта, 1905 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» ԸՆԿ. Электропечатня типографскаго Т—ва „Гермесъ". Мал. ул. №15